Ճանաչի՛ր ինքդ քեզ

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 12.07.2023թ. չորեքշաբթի թիվ 29-30 (1106-1107)

## Վարդավառ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին **Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը՝ Վարդավառը,** այս տարի նշում է հուլիսի 16-ին:

Եկեղեցական տոնացույցի համաձայն՝ տոնը նշվում է **Զատկից** 98 օր հետո, 35 օրերի շարժականություն ունի եւ կարող է հանդիպել հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

***Քրիստոսի Պայծառակերպությունը*** Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է եւ նվիրված է **Պետրոս, Հովհաննես** եւ **Հակոբոս** առաքյալների առջեւ **Քրիստոսի** այլակերպության հիշատակին, որը, ըստ ավանդության, տեղի է ունեցել *Թաբոր* լեռան վրա:

**Քրիստոսի Պայծառակերպության** մասին վկայում են **Մատթեւոս** (17: 1-13), **Մարկոս** (9: 1-12) եւ **Ղուկաս** (9: 28-36) ավետարանիչները. *«Եւ Նրա դեմքը փայլեց, ինչպես արեգակը. եւ Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը: Եւ ահա նրանց երեւացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին Նրա հետ: Պետրոսը պատասխան տվեց եւ ասաց Հիսուսին. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Եւ մինչ Նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, Դրա՛ն լսեցեք»: Երբ աշակերտներն այս լսեցին, իրենց երեսի վրա ընկան եւ սաստիկ վախեցան: Եւ Հիսուս, մոտենալով, դիպավ նրանց ու ասաց. «Ոտքի՛ ելեք եւ մի՛ վախեցեք»: Նրանք աչքերը բարձրացրին եւ Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան»* (Մատթ. 17: 2-8):

Հայաստանյայց եկեղեցին **Հիսուս Քրիստոսի *Պայծառակերպությունը*** կոչում է նաեւ ***Այլակերպության*** տոն կամ ***Վարդավառ:*** Վերջինս հին հայկական տոնի անվանումն ունի, որից պահպանվել է նաեւ միմյանց վրա ջուր ցողելու սովորույթը: Ըստ **Վահան վարդապետ Տեր-Մինասյանի՝** Վարդավառը հազարամյակների պատմություն ունեցող տոն է, հնագույնը, որ հաստատել է **Նոյ նահապետը:** Այդ օրը հայերը, որտեղ էլ որ բնակվեն, գույնզգույն ծաղիկներով, կարմիր վարդերով ծաղկեպսակներ են հյուսում, զարդարում իրենց տաճարները, դրա համար էլ այս տոնը կոչվում է *Վարդավառ:* Հայերն իրար վրա ջուր են ցողում, լողանում են գետերում եւ աղավնիներ թռցնում՝ ի հիշատակ Նոյի եւ ջրհեղեղի: Ինչպես մինչեւ **Տիրամոր** *վերափոխման* տոնին կատարվող *խաղողօրհնեքի* արարողությունը խաղող չէին ուտում, այնպես էլ ժողովրդական տարածված սովորությամբ մինչեւ *Վարդավառը* խնձոր չէին ուտում: Այս սովորությունն անվանում էին *«խնձորի պաս»:* Հայաստանի շրջաններում *Վարդավառը* նշվում է տարբեր տոնախմբություններով: Ըստ ժողովրդական ավանդության՝ *Վարդավառի* գիշերը բոլոր սրբերի գերեզմանների վրա լույս է իջնում, ով այդ տեսնի, ինչ որ խնդրի՝ կկատարվի:

*Պայծառակերպության* տոնին հաջորդող երկուշաբթի օրը *մեռելոց* է: Այդ օրը նույնպես եկեղեցիներում մատուցվում է **Սուրբ Պատարագ**, որի ավարտին կատարվում է *հոգեհանգստյան կարգ*: Եկեղեցական արարողությունից հետո մարդիկ այցելում են հանգուցյալների շիրիմներին:










Ավարտական

## ՀՀ Նախագահի մասնակցությամբ

Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը** մասնակցել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շրջանավարտների ավարտական դիպլոմների հանձնման հանդիսավոր միջոցառմանը:

Նախագահը շնորհավորել է ԲՈՒՀ-ի շրջանավարտներին եւ հաջողություններ մաղթել հետագա ուսման եւ աշխատանքային գործունեության մեջ:

***շարունակությունը՝ էջ 2***

«Ոսկե ծիրան»

## Փառատոնը դարձել է տարածաշրջանային կինոտոն

*«Ոսկե ծիրան»* հոբելյանական 20-րդ միջազգային կինոփառատոնի մեկնարկը տրված է. հուլիսի 9-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել փառատոնի հանդիսավոր բացումը: Մեկնարկին փառատոնի պատվավոր հյուրերը, աջակիցներն ու պարզապես մշակութասեր մարդիկ անցել են կարմիր գորգի վրայով:

*«Ոսկե ծիրան»* փառառոնն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Փառատոնի բացմանը ներկա է եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Ողջունելով փառատոնի կազմակերպիչներին ու հյուրերին՝ կինոտոնի բացման առիթով, նախարարն առանձնահատուկ շեշտել է, որ տարին հոբելյանական է թե՛ հայկական կինոյի, թե՛ անիմացիայի, թե՛ փառատոնի համար:

***շարունակությունը՝ էջ 3***

Ասուլիս

## Հայտագրվել է 5000 ուսուցիչ

2023 թվականից սկսած՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կամավոր ատեստավորումն անցկացվում է 1-12-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների համար:

**Ատեստավորման հայտերի ընդունելության վերջնաժամկետը 2023 թվականի հուլիսի 15-ն է:**

Այս թեմայով *«Արմենպրես»* լրատվական գործակալությունում տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի բանախոսներն էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի ուսուցիչ **Տիգրան Սարդարյանը** եւ Երեւանի թիվ 29 ավագ դպրոցի ուսուցչուհի **Նաիրա Կոսյանը:**

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի գնահատմամբ՝ կամավոր ատեստավորման նպատակը ուսուցիչների կարողությունների զարգացումն է եւ դրա միջոցով խրախուսման միջոցների կիրառումը: ԿԳՄՍ փոխնախարարը տեղեկացրել է՝ այս պահի դրությամբ կամավոր ատեստավորման հայտ է ներկայացրել շուրջ 5000 ուսուցիչ՝ հանրապետության ուսուցիչների **13 տոկոսը:**

***շարունակությունը՝ էջ 6***

### Այս համարում

● *Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման **հարցաշարը** (շարունակություն)*

տե՛ս՝ ***էջ 9-21***

Պարզաբանում

## Ժամաքանակի բաշխման վերաբերյալ

ՀՀ Տավուշի մարզի դպրոցներում իրականացված՝ Հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման արդյունքներով նախատեսվում է փոփոխություններ կատարել չափորոշչի ուսումնական պլանի կառուցվածքում: Փոփոխությունները վերաբերում են հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների համար սահմանված նորմատիվային ծավալներին, ուսումնական բնագավառներին հատկացված տարեկան նորմատիվային ժամաքանակին:

**Մասնավորապես՝ նոր փոփոխությամբ՝ *«Օտար լեզուներ»* բնագավառում ժամաքանակի բաշխումը կատարվում է՝ հետեւյալ տոկոսային հարաբերակցությամբ.**

*պետական բաղադրիչ՝*
*տարրական դպրոցում՝ 10-15 %,*
*միջին դպրոցում՝ 12-20 %,*
*ավագ դպրոցում՝ 7-20 %,*
**ընտրովի բաղադրիչ՝**
*տարրական դպրոցում՝ 6 %,*
*միջին դպրոցում՝ 8 %,*
*ավագ դպրոցում՝ 15 %:*

Օտար լեզուների խորացված ծրագրով ուսուցում կազմակերպելու համար միջին դպրոցում ուսումնական բնագավառին նախկինում հատկացված շաբաթական առավելագույն 5 ժամի փոխարեն նախատեսվում է հատկացնել 8 ժամ, որը հնարավորություն կտա դպրոցին մեկ օտար լեզու ուսումնասիրել 4 կամ 4,5 ժամով, երկրորդ օտար լեզուն՝ 2 ժամով, իսկ երրորդ օտար լեզուն՝ 1,5 կամ 2 ժամով:

Հավաստագրում

## Նախարարի հրամանով

Երաշխավորվել է նախադպրոցական հաստատությունների տնօրենի հավաստագրման համար վերապատրաստող 9 կազմակերպություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով երաշխավորվել է 9 կազմակերպություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով:

- *«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ:*
- *«Էդիթ Պրինտ» ՍՊԸ:*
- *«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ:*
- *«Հույս եւ ապագա» երեխաների աջակցության եւ զարգացման բարեգործական ՀԿ:*
- *«Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամ:*
- *«Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ:*
- *Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:*
- *«Թիչինգ Ըքադեմի» կազմակերպություն:*
- *«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ:*

Կառավարության որոշումով

# ՀՀ մարզերում կկառուցվի 172 ուսումնական հաստատություն

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում 313 մլն 995 հազար դրամ գումարի չափով: Գումարը կուղղվի ՀՀ Լոռու եւ Շիրակի մարզերում 42 հաստատության՝ 15 կրթահամալիրի ստեղծման, 20 դպրոցի եւ 7 մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը՝** նշելով, որ սա հերթական որոշումն է՝ Կառավարության՝ 2021-2026 թթ.-ի ծրագրով ամրագրված 500 մանկապարտեզի եւ 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրի շրջանակում:

Նրա խոսքով՝ ՀՀ Լոռու եւ Շիրակի մարզերում եւս աշխատանքային խմբերն այցելել են շենքային անմխիթար պայմաններում գտնվող, փոքրաքանակ աշակերտական համակազմով դպրոցներ, իրականացրել մանրամասն տեղազննություն:

*«Ըստ էության՝ Լոռին եւ Շիրակը վերջին երկու մարզերն էին. այս որոշմամբ ՀՀ բոլոր մարզերի կառուցվող հաստատությունների ընդհանուր թիվը կկազմի 172, որոնցից 84-ը՝ կրթահամալիր, 81-ը՝ առանձին դպրոց: 7 դպրոց ամբողջական տեսքի կբերվի մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման եւ վերանորոգման արդյունքում: Այսպիսով՝ 172 հաստատության կառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով Կառավարությունը հատկացրել է շուրջ 1,6 մլրդ դրամ: Առաջիկայում կներկայացնենք նմանատիպ որոշման նախագծեր երեւան քաղաքի, ինչպես նաեւ ՀՀ Լոռու եւ Շիրակի մարզերի այն դպրոցների համար, որտեղ լրացուցիչ դիտարկման կարիք կա»,-* նշել է նախարարը՝ ընդգծելով, որ կառուցվող հաստատությունների նախագծային հզորությունները հաշվարկված են շուրջ 50 հազար երեխաների համար:

Ժաննա Անդրեասյանը հիշեցրել է, որ այլ ծրագրերի շրջանակում անցած տարի 24 դպրոցում շինարարական աշխատանքներն ավարտվել են. այս պահին շինարարություն է ընթանում 100-ից ավելի հաստատություններում: *«Պարբերաբար քննարկումներ ենք ունենում փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի համակարգմամբ, եւ կարծում եմ, որ այս ծրագրի շրջանակում 300 դպրոց եւ ավելին ապահովելու ճանապարհին ենք»,-* փաստել է նախարարը:

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը,** կարեւորելով 500 մանկապարտեզի եւ 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագիրը, ընդգծել է, որ դրա նպատակն է որակյալ կրթության հասանելիության ապահովումը ՀՀ բոլոր բնակավայրերի բոլոր երեխաների համար:

Նշենք, որ Լոռու մարզում ընտրվել է 32 բնակավայր, որոնցից 11-ում կձեւավորվեն կրթահամալիրներ, 11-ի համար կկառուցվեն նոր դպրոցների շենքեր, 2-ում կկառուցվեն միայն մարզադահլիճների եւ հանդիսությունների դահլիճների մասնաշենքերը, իսկ ուսումնական մասնաշենքերը կվերանորոգվեն: Դպրոցներից 4-ի համար անհրաժեշտ է լրացուցիչ դիտարկում (պահանջում են անհատական նախագծեր եւ այլն) եւ 2-ի մասով անհրաժեշտ կլինի հետագայում իրականացնել միայն ընթացիկ նորոգման աշխատանքներ:

*շարունակությունը՝ էջ 6*

# ՀՀ Նախագահի մասնակցությամբ

***սկիզբը՝ էջ 1***

Իր խոսքում Վահագն Խաչատուրյանը մասնավորապես ասել է.

*«Կյանքում ամենակարեւորը, որ գնահատվում է մարդկանց մեջ, գիտելիքն ու պրոֆեսիոնալիզմն է: Ամեն օր, ամեն վայրկյան մենք, անկախ տարիքից, մեր ունեցած գիտելիքը պետք է հարստացնենք, նույնիսկ փոքր քանակությամբ: Հատկապես այս ժամանակաշրջանում, երբ զարգացումը շատ արագ է տեղի ունենում, երբ առօրյա կյանքում կամ ընդհանրապես փոփոխությունները լինում են ամեն վայրկյան, մենք պետք է անընդհատ գիտելիք ձեռք բերենք եւ այն կարողանանք «մարսել», որպեսզի կարողանանք այս արագ զարգացող միջավայրում մեր տեղն ունենանք, գնահատենք ինքներս մեզ եւ մեր ժամանակը: Հիմա ավելի մեծ խնդիր է նաեւ՝ կարողանալ «մարսել» այն գիտելիքները, որոնք ստանում ենք: Այս ինֆորմացիոն դարաշրջանում՝ շատ դժվար է առաջնային, երկրորդային տեղեկությունները տարանջատել, սակայն սա նույնպես պետք է կարողանաք անել: Հույս ունեմ, որ ձեր դասախոսներն այս հարցում եւս կարողացել են ձեզ օգնել եւ առաջնորդել:*

*Երբեւիցե չհուսահատվե՛ք: Միշտ հիշե՛ք, որ ցանկացած ծանր վիճակից դուրս գալու լուծում կա: Սրանք խոսքեր չեն, որ ձեզ հուսադրեն, դա է իրականությունը, որը հնչեցնում է մեկը, ով ունի մարդկային սովորական կյանքի փորձ, որը փորձում եմ փոխանցել ձեզ: Նույնիսկ ամենածայրահեղ ծանր վիճակում միշտ լուծումներ գտնվում են: Դուք պատրա՛ստ եղեք, որ այդ լուծումները ինքներդ եք գտնելու, հույսը դրեք ձե՛ր վրա: Իհարկե, ձեզ օգնողներ միշտ կլինեն, ձեր ծնողները, դասախոսները, հարազատները, ընկերները, մտերիմները ձեր կողքին են լինելու, բայց հիշեք, որ հաջողության գրավականը նրանում է, որ դուք վստահեք ինքներդ ձեզ, պատրաստ լինեք դժվարություններ հաղթահարել: Սա շատ կարեւոր է, որովհետեւ երիտասարդ տարիքում ցանկացած փոքր դժվարություն թվում է անհաղթահարելի եւ հուսահատություն է առաջացնում, բայց հավատացեք, որ դրանք վայրկյաններ են, որոնք պետք է մոռանալ:*




*Իմացե՛ք նաեւ, որ երջանիկ են այն ժողովուրդները, որոնք ունեն ինքնիշխան պետություն: Փառք Աստծո, Հայաստանի Հանրապետությունը 1991 թվականից կա եւ շարունակելու է գոյություն ունենալ եւ Հայաստանի ապագան արդեն գտնվում է ձեր ձեռքերում, եւ դուք եք լինելու Հայաստանի ապագան կերտողները: Սա եւս շատ պատասխանատու խնդիր է, որ դուք պետք է կարողանաք լուծել, եւ այն գիտելիքը, որ ստացել եք նաեւ այդ նպատակին ծառայեցնեք: Հավատացնում եմ ձեզ, որ այն, ինչ մենք 1991 թվականին երազում էինք՝ անկախ պետություն ունենալու առումով, չէինք պատկերացնում, որ այսպիսին կլինի՝ իր դժվարություններով, խնդիրներով, հաջողություններով, անհաջողություններով, ամեն ինչով: Սակայն, փաստորեն, մենք արդեն 32 տարի շարունակում ենք մեր ճանապարհը: Այսօր, այս պահին մենք դժվարությունների մեջ ենք: Սակայն դա չի նշանակում, որ այդ դժվարություններն անհաղթահարելի են: Ե՛վ որպես պետություն, եւ՝ որպես պետության համար պատասխանատուներ, մենք, իրականում, ամեն ինչ անելու ենք, որ ի վերջո բոլորս ապրենք բարեկեցիկ երկրում, որտեղ ամենակարեւոր արժեքներն են ազատությունը եւ դրա հետ միասին նաեւ պատասխանատվությունը, ժողովրդավարությունը: Սրանք պարզապես խոսքեր չեն, այլ այն հիմնական գաղափարախոսական հենքերն են, որի հիման վրա մեր պետությունն այսօր կարող է առաջ գնալ: Մենք չունենք բնական ռեսուրսներ, կամ ունենք շատ քիչ քանակությամբ, բայց ունենք մարդիկ, որոնք ունեն միտք, գիտելիք, հնարավորություն, կարողություն, որպեսզի մեր երկիրն իսկապես դարձնեն այնպիսի երկիր, որտեղ ապրողները լինեն երջանիկ: Այսինքն՝ բարեկեցիկ երկիր ունենալու խնդիրը մենք պետք է կարողանանք լուծել, եւ այդ գործում ձեր դերը շատ ավելի է մեծանալու: Վստահ եմ, որ դուք կայանալու եք որպես լավ մասնագետներ, ունենալու եք հաջողություններ: Վստահ եմ նաեւ՝ դուք ավելի լավ եք կառավարելու մեր երկիրը եւ այն երազանքները, որոնք մեր սերունդը, իմ սերունդը չկարողացավ իրականություն դարձնել, դուք իրականություն եք դարձնելու:*

*Կրկին շնորհավորում եմ ձեզ եւ մաղթում հաջողություններ»:*

Մայր աթոռ

# Վեհափառն ընդունեց մի խումբ սփյուռքահայ երիտասարդների

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) *«Գլոբալ առաջնորդության»* եւ *«Երաժշտական Հայաստան»* ծրագրերի մասնակից սփյուռքահայ երիտասարդ ուսանողներին ու երաժիշտներին, ինչպես նաեւ Մոնրեալի (Կանադա) սկաուտական խմբին` ուղեկցությամբ ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամ **Վազգեն Յակուբյանի:**



Հանդիպմանը, տիար Յակուբյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ շուրջ 35 սփյուռքահայ երիտասարդներ Հայաստան են ժամանել հարստացնելու իրենց գիտելիքները հայոց լեզվի, հայկական երգարվեստի բնագավառներում, ի մոտո ծանոթանալու հայկական մշակույթին ու պատմությանը եւ զորացնելու իրենց կապը մայր հայրենիքի հետ:

Հայոց Հայրապետը, իր գնահատանքը բերելով ՀԲԸՄ-ին` նման նախաձեռնության համար, կարեւոր նկատեց սփյուռքի երիտասարդ հայորդիների այցը Հայաստան` հատկապես այս դժվարին օրերին, որպեսզի վերջիններս հաղորդակից լինեն ոչ միայն հայրենիքի հոգեւոր ու մշակութային արժեքներին, այլեւ երկրում տիրող իրավիճակին, Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ առկա անվտանգային խնդիրներին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին հայրենասիրական զգացումի նոր լիցքերով քաջալերված վերադառնան իրենց երկրներ եւ նախանձախնդրորեն ամեն ջանք ի գործ դնեն նպաստելու հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

Հայոց Հովվապետը պատգամեց, որ հայորդիներն իրենց գիտելիքներով եւ երիտասարդական ավյունով աջակցեն իրենց համայնքների առավել զորացմանն ու միասնականության կերտմանը` ազգային ինքնությունը պահպանելու եւ հայրենիքին օգտաշատ ծառայություն բերելու համար:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ սփյուռքահայ երիտասարդների հարցերին: Վերջում Նորին Սրբությունը *«Պահպանիչ»* աղոթքով օրհնեց հայորդիներին:

# Փառատոնը դարձել է տարածաշրջանային կինոտոն

*սկիզբը` էջ 1*

*«Ոսկե ծիրանը» դարձել է տարածաշրջանային կինոտոն: Մենք լավագույն ֆիլմերին առնչվելու եւ հայտնի մարդկանց հյուրընկալելու հնարավորություն ունենք, ինչը եւս պայմաններ է ստեղծում հայ կինոարտադրության զարգացման համար: Փառատոնի մեկնարկին մենք դիտելու ենք մի ֆիլմ, որը հինգ երկրի, այդ թվում` Հայաստանի համարտադրություն է»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը` հավելելով, որ փառատոնի շրջանակում տեղի կունենա իրանական կինոյի նշանավոր վարպետներից մեկի` Սամուել Խաչիկյանի ֆիլմերի առաջին հետահայաց ցուցադրությունը Հայաստանում:

Փառատոնի լիամետրաժ մրցույթի ժյուրիի կազմը գլխավորում է Վենետիկի կինոփառատոնի *«Ոսկե առյուծի»* դափնեկիր, ֆիլիպինցի ճանաչված ռեժիսոր **Լավ Դիասը:** Փառատոնի պատվավոր հյուրերից են Կաննի կինոփառատոնի *«Ոսկե արմավենու»* ճյուղի կրկնակի դափնեկիրներ **Դարդեն** եղբայրները, ճապոնացի ռեժիսոր, դերասան, կատակերգու, սցենարիստ, հեռուստահաղորդավար, նկարիչ ու բանաստեղծ, Վենետիկի կինոփառատոնի *«Ոսկե առյուծ»* մրցանակի դափնեկիր **Տակեշի Կիտանոն,** ինչպես նաեւ Լոկառնոյի կինոփառատոնի *«Ոսկե հովազի»* դափնեկիր, պորտուգալացի ռեժիսոր **Պետրո Կոշտան,** որը փառատոնի ընթացքում կանցկացնի հատուկ աշխատարան` *«Կորիզ»* կարճամետրաժ մրցութային ծրագրի ֆիլմերի հեղինակների հետ: Փառատոնի հատուկ հյուրերից են Կաննի կինոփառատոնի *«Հատուկ հայացք»* ծրագրի գլխավոր մրցանակակիր, ղազախստանցի ռեժիսոր **Սերգեյ Դվորցեւոյը** եւ Կաննի կինոփառատոնի հետխորհրդային տարածաշրջանի գլխավոր խորհրդատու **Ժոել Շապրոնը:**

Բացման հանդիսավոր արարողությանը Տակեշի Կիտանոն եւ Դարդեն եղբայրներն արժանացել են *«Փարաջանովյան թալեր»* մրցանակին` կինոյում ունեցած ավանդի համար:

Փառատոնի մեկնարկն ազդարարել են կինոտոնի երեք հիմնադիրները` **Հարություն Խաչատրյանը, Միքայել Ստամբոլցյանը** եւ **Սուսաննա Հարությունյանը:**

Փառատոնի բացման արարողությանը հաջորդել է ռեժիսոր Ջեսիկա Վուդվորթի *«Լուկա»* (Բելգիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Բուլղարիա, Հայաստան) ֆիլմի ցուցադրությունը, որի պրեմիերան կայացել է Ռոտերդամի փառատոնում: Ֆիլմում Ջերալդին Չապլինի հետ գլխավոր դերերից մեկը կերտել է դերասան Սամվել Թադեւոսյանը: Ֆիլմը նույն օրը ցուցադրվում էր նաեւ Արցախում:

*«Ոսկե ծիրան»*-ն այս տարի անցկացվում է հուլիսի 9-16-ը: Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ *«Երեւանյան պրեմիերաներ»* ծրագրով կցուցադրի ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի, Վենետիկի եւ այլն) կինոփառատոներից: Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, որոնք իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին:

Այս տարի Երեւանի կինոյի տունը եւ Մոսկվա կինոթատրոնը փառատոնի անցկացման հիմնական վայրերն են: Ավանդական ռանդեվուները կանցկացվեն ՀԲԸՄ-ում:

Փառատոնի փակմանը կցուցադրվի կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանի *«Օրացույցը»* ֆիլմի նոր գունաշտկված տարբերակը` ֆիլմի ստեղծման 30-ամյակի առթիվ:

Նշենք նաեւ, որ *«Ոսկե ծիրան»* փառատոնի գլխավոր հովանավորներն են Երեւանի քաղաքապետարանը, *«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», «Թիմ»* ընկերությունների խումբը եւ *«Արարատ»* կոնյակի գործարանը:





«ԴԱՍԱՐԱՆ+ԴԱՍԱԿԱՆ»

# «Թատրոնը փոխում է մարդուն»

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում ամփոփվել է *«ԴԱՍԱՐԱՆ+ԴԱՍԱԿԱՆ»* թատերական կրթական ծրագրի հերթական փուլը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նախաձեռնությամբ: Հաշվետու ներկայացումներին ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը:**



Նախարարը ողջունել է մասնակիցներին եւ ընդգծել` այն բոլոր ծրագրերը, որ հնարավորություն են տալիս երեխաներին առնչվելու արվեստին, պետք է դարձնել ավելի հասանելի ու ներառական: Այլ նախագծերի իրագործման ճանապարհին Ժաննա Անդրեասյանն այս ծրագրի փորձառությունն անգնահատելի է համարել. *«Սա անմոռանալի փորձառություն է նաեւ երեխաներից յուրաքանչյուրի համար: Եվ ակնհայտ է` պետք է շատ սիրես այն աշխատանքը, որով զբաղվում ես, որպեսզի ամառվա այս օրերին, երբ բոլորն անելիքները կրճատում են հանգստանալու տրամադրությամբ, գաս եւ օրդ լցնես թատրոնով: Թատրոնը փոխում է մարդուն, եւ մեզնից յուրաքանչյուրը, անկախ նրանից, թե ինչքանով է առնչվել թատրոնին, կարծում եմ, իր վրա զգացել է փոփոխությունները, որ թողել է որեւէ լավ ներկայացում: Սա է ամենակարեւորը: Այս երեխաներից շատերը կընտրեն թատրոնը, շատերն էլ կգնան այլ ճանապարհով: Բայց այստեղ նրանք ստացել են հնարավորություն` միասին մտածելու, աշխատելու եւ ստեղծելու, ինչը կօգնի ամենաբարդ խնդիրներին ճիշտ առնչվել»:*

Թատրոնի տնօրեն **Վարդան Մկրտչյանի** գնահատմամբ եւս` *«ԴԱՍԱՐԱՆ+ԴԱՍԱԿԱՆ»* ծրագիրը բացահայտում է հանրակրթական դպրոցների աշակերտների պոտենցիալը եւ նրանց տալիս է հնարավորություն` իրականություն դարձնելու սեփական երեւակայությունը:

Որպես ծրագրի այս փուլի եզրափակում` խմբերը թատրոնի Փոքր բեմում հանդիսատեսին ներկայացրել են նախագծի ընթացքում ստեղծած ներկայացումները: Ավարտին ԿԳՄՍ նախարարը մասնակիցներին պարգեւատրել է շնորհակալագրերով: Ծրագրի այս փուլում` հունիսի 26-ից հուլիսի 9-ը, մասնակցել են 70 աշակերտ` ինչպես Երեւանից, այնպես էլ Հայաստանի տարբեր մարզերից: Հիմնական թիրախային խումբը ավագ դպրոցների աշակերտներն են: Երկշաբաթյա նախագծի ընթացքում մասնակիցներն աշխատել են խմբերով` իրենց մենթոր-ղեկավարների եւ դասախոսների ղեկավարությամբ: Այս տարի դրամատիկական խմբերին զուգահեռ ծրագիրն ունեցել է պարի, մնջախաղի եւ մյուզիքլի խմբեր:

Նշենք, որ ծրագրի նպատակն է ամրապնդել դպրոց-թատրոն կապը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում աշակերտներին` ծանոթանալու ոլորտի լավագույն մասնագետների հետ, պատկերացնելու թատրոնի համակարգային կառուցվածքը:

Մարզական

# Նախարարն ընդունել է Եվրոպական խաղերի մեդալակիրներին

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Եվրոպական ամառային երրորդ խաղերում հաջող մրցելույթներ ցուցադրած եւ մեդալներ նվաճած հայ մարզիկներին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ **Սմբատ Լպուտյանը,** մարզիչներ եւ մարզիկներ:

Հիշեցնենք՝ Լեհաստանում կայացած Եվրոպական ամառային երրորդ խաղերում հայ մարզիկները 3 մեդալ են նվաճել՝ 1 արծաթե եւ 2 բրոնզե:

ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել մարզիկներին ու մարզիչներին՝ կատարած քրտնաջան աշխատանքի համար եւ շնորհավորել նրանց՝ վերջին հաջողությունների առթիվ:

*«Ձեր հաջողությունները շատ ոգեւորիչ են ոչ միայն մեզ, այլեւ պատանիների համար: Շատ ուրախ եմ, որ մարզաձեւերի ցանկն ընդլայնվում է ու հաջողություններ ենք գրանցում տարբեր մարզաձեւերում: Այս տարի մեր մարզիկներն արդեն 221 մեդալ են նվաճել ու սա շատ ուրախալի է: Սա նշանակում է, որ մարզիկները ցանկացած մրցաշարի հանդես են գալիս մեծ սրտացավությամբ, ինչի համար շնորհակալ եմ: Կառավարությունը շարունակաբար մեծացնում է սպորտին տրամադրվող աջակցությունը: Բացի տարեսկզբին տրամադրվող հիմնական ֆինանսավորումից՝ արդեն երկրորդ տարին ֆեդերացիաներին նաեւ լրացուցիչ ֆինանսական աջակցություն է տրամադրվում: Սա, վստահ եմ, օգնում է մարզիկներին կենտրոնանալու բացառապես իրենց մրցելույթների եւ մարզավիճակի վրա»,*- ասել է նախարարը:

Նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւս շնորհավորել է մարզիկներին՝ նշելով, որ շախմատի կանանց հավաքականի առաջատար **Էլինա Դանիելյանը** շարունակում է կայուն մրցելույթները: Հիշեցնենք՝ Կրակովում անցկացվել է նաեւ կայծակնային շախմատի Եվրոպայի զույգերի առաջին առաջնությունը, որտեղ Հայաստանի թիմը՝ ի դեմս Էլինա Դանիելյանի եւ **Շանթ Սարգսյանի,** նվաճել է չեմպիոնի տիտղոսը: Անհատական հաշվարկում Էլինան գրավել է առաջին, իսկ Շանթը՝ երկրորդ տեղը:

Էլինա Դանիելյանի խոսքով՝ տպավորությունները շատ մեծ են եղել. *«Առաջին անգամ էր անցկացվում զույգերի Եվրոպայի առաջնություն, ու մեծ պատիվ էր Հայաստանը ներկայացնել այդպիսի մեծամասշտաբ մրցաշարում: Կարելի է ասել՝ կայծակնային շախմատի Եվրոպայի զույգերի առաջին առաջնությունում գրեցինք մեր անունը: Իրարանցումը շատ մեծ էր: Շախմատային աշխարհը շատ դրական արձագանքեց այդ մրցաշարին: Կարելի է ասել՝ պատմության մեջ մտանք»:*

Կարեն Գիլոյանն անդրադարձել է նաեւ մյուս մարզաձեւերին, որոնցում հայ մարզիկները հաջողութություններ են գրանցել. *«Մուայթայի համար սա առաջին էական հաջողությունն է պաշտոնական մրցումներում. մարզաձեւը մեր տեսադաշտում է: **Անիտա Մակյանը** հիանալի հաջողություն գրանցեց կարատեում: Իսկ հրաձիգները ուրախացնում են իրենց կայուն ելույթներով»:*

Մարզիկներն ու մարզիչները շնորհակալություն են հայտնել ընդունելության համար եւ հանդիպման ընթացքում նաեւ մի շարք հուզող հարցեր բարձրացրել:





# Շնորհվել են մարզական կոչումներ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանն** ընդունել է մարզական կոչումների արժանացած՝ մարզաշխարհի մի շարք ներկայացուցիչների:

Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետի կոչմանն արժանացել են կարատեիստներ **Դավիթ** եւ **Անիտա Մակյանները,** սամբիստներ **Արման Ավանեսյանն** ու **Արսեն Խանջյանը,** բռնցքամարտիկ **Դավիթ Սիմոնյանը** եւ ծանրորդ **Ալեքսանդրա Գրիգորյանը:** Եվս 23 մարզիկ արժանացել է Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի կոչման:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը շնորհավորել է մարզիկներին եւ հետագա հաջողություններ մաղթել նրանց: *«Շնորհավորում եմ բոլորիդ: Սա ձեր քրտնաջան մարզումների եւ նվիրված աշխատանքի արդյունքն է: Իհարկե, սրանք պատվաբեր կոչումներ են, բայց գագաթնակետը սպորտի վաստակավոր վարպետի կոչումն է: Մաղթում եմ, որ հետագայում հասնեք այնպիսի արդյունքների, որոնց համար կստանաք հենց այդ բաղձալի կոչումը: Հուսով եմ՝ պարբերաբար կհանդիպենք ձեր հաջողությունները նշելու ու ձեր պարգեւները հանձնելու համար»,*- ասել է Կարեն Գիլոյանը:

Նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել նաեւ մարզիչներին քրտնաջան ու անձնվեր աշխատանքի համար. *«Ձեր աշխատանքը շատ կարեւոր է. Կառավարությունն ամեն ինչ անում է, որ դուք ձեզ գնահատված զգաք: Եվ դա շարունական է լինելու: Այս պահին արդեն 201 մեդալ ունենք, որը ֆանտաստիկ արդյունք է: Տեսնենք՝ մինչեւ տարեվերջ ինչ արդյունքներ կգրանցենք»:*

Լեհաստանում անցկացված Եվրոպական ամառային երրորդ խաղերում բրոնզե մեդալը նվաճած Անիտա Մակյանի խոսքով՝ նմանօրինակ բարձր կոչման արժանանալն իր համար շատ ոգեւորիչ է. *«Շատ ուրախ եմ եւ ոգեւորված: Շնորհակալ եմ, որ տարիների աշխատանքն ու ձեռքբերումները գնահատվում են պետության կողմից: Այս կոչումը պարտավորեցնում է ավելի լավ մարզվել եւ լավագույնս ներկայացնել մեր երկիրը միջազգային հարթակներում»:*

Անիտան առաջին հայ մարզուհին էր, որ ներկայացնում էր կարատեն նմանօրինակ մեծամասշտաբ մրցաշարում՝ Եվրոպական ամառային երրորդ խաղերում, ու դարձել է նաեւ առաջին մեդալակիրը: Մարզուհու խոսքով՝ մեդալը երկար սպասված էր. *«Շատ անգամներ տարբեր մրցաշարերում մոտ եմ եղել մեդալի, բայց ինչ-որ բան պակասել է դրան հասնելու համար: Վերջապես հաղթանակ ունեմ ու շարժվելու եմ առաջ»:*

Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի կոչմանն արժանացած մարզիկների թվում են ակրոբատիկայի թիմի անդամները, որոնք վերջերս հաղթանակով էին վերադարձել Ռուսաստանում կայացած Գուրգենիձեի անվան միջազգային մրցաշարից: **Արինա Հարությունյանն** ու **Վահան Բունիաթյանը** բրոնզե մեդալ էին նվաճել մեծահասակների, իսկ **Վահե Սարգսյանն** ու **Մանե Օհանյանը**՝ 13-19 տարեկանների խառը զույգերի պայքարում: 4 մարզիկներն էլ միջազգային եւ ներքին առաջնությունների բազմակի մեդալակիրներ են եւ արժանացել են Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի կոչման:

ՀՀ սպորտի վարպետի կոչմանն արժանացել են նաեւ Հայաստանի պաուերլիֆտինգի հավաքականի մի շարք անդամներ: Ֆեդերացիայի նախագահ **Գագիկ Սարոյանը,** շնորհակալություն հայտնելով գնահատանքի համար, ընդգծել է՝ **Ժաննա Շահնազարյանը, Աշոտ Պետրոսյանը, Լեւիկ Հակոբյանն ու Գառնիկ Սահակյանն** իրենց տարիքային խմբերում բազմիցս մեդալակիրներ են դարձել ոչ միայն Հայաստանում, այլեւ աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում. *«Շնորհակալ եմ ԿԳՄՍ նախարարությանը՝ մշտապես մեր ֆեդերացիայի ու մեր մարզիկների կողքին լինելու համար: Առաջիկայում մի շարք կարեւոր մրցաշարեր ունենք, եւ վստահ եմ՝ շարունակելու ենք լավ արդյունքներ գրանցել՝ բարձր պահելով մեր երկրի պատիվը»:*

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հրամանով՝ ՀՀ սպորտի վարպետի կոչմանն արժանացել են նաեւ լողորդներ **Դիանա Մուսայելյանը, Դավիթ Սարգսյանը, Միքայել Ավետիսյանը, Ալեքս Աբրահամյանը** եւ **Մաքսիմ Շատալովը,** սամբիստ **Արմեն Աղումյանը,** բռնցքամարտիկներ **Արթուր Մկրտչյանը, Արմեն Պողոսյանը** եւ **Աղվան Ալեքսանյանը,** ծանրորդներ **Հովհաննես Ղահրամանյանը** եւ **Սեյրան Խուդանյանը,** գնդակային հրաձգության ներկայացուցիչներ **Սեդա Գաբրիելյանն** ու **Գեւորգ Մելքոնյանը,** ինչպես նաեւ սեղանի թենիսի մարզիկներ **Էդուարդ Անտոնյանը** եւ **Վարդգես Սարոյանը:**








Սերգեյ Փարաջանով -100

# Նախարարն ընդունել է *«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական ներկայացման խմբի անդամներին

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** այսօր ընդունել է *«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական պարային ներկայացման կազմակերպչական եւ ստեղծագործական խմբի անդամներ **Սաթէ Խաչատրյանին** (ֆրանսիական *«Սաթէ-Աթղը»* թատերական միության ղեկավար, նախագծի եւ դրամատուրգիական կոնցեպտի հեղինակ), **Մուրադ Մերզուկին** (ներկայացման խորեոգրաֆ), **Բենժաման Լըբրըտոնին** (ներկայացման բեմանկարիչ), **Էդգար Մանուկյանին** (ներկայացման հագուստների հեղինակ), **Ռաֆայել Ռիմսկի Կորսակովին** (*«Տոբոգան»* թատրոնի տնօրեն) եւ **Անտուան Գարիելին** (*«Գասկոն»* եւ *«Վիլֆրանշ»* թատրոնների տնօրեն):

Հանդիպմանը ներկա էր նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը:**

Հանդիպման առանցքում Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված՝ *«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական պարային ներկայացման եւ հայ-ֆրանսիական մշակութային, մասնավորապես՝ թատերական ոլորտում կապերի ամրապնդմանն առնչվող հարցերն էին:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին՝ նշելով, որ 2024 թվականը կարեւոր հոբելյանական տարի է. նշվում է անվանի ռեժիսոր Սերգեյ Փարաջանովին ծննդյան 100-ամյակը. *«Այդ նպատակով օրերս կձեւավորվի կառավարական հանձնաժողով, որը կպլանավորի ամբողջ տարվա ընթացքում տարբեր միջոցառումների իրականացումը: Մենք նպատակ ունենք հնարավորինս լայն օգտագործել այս հնարավորությունը եւ Փարաջանովի ժառանգությունը տարածելով՝ այն դարձնել առավել հասանելի ու տեսանելի: Շատ ուրախ եմ, որ այս քաղաքականության շրջանակում մենք հնարավորություն ունենք աջակցելու «Նռան գույնը» հայ-ֆրանսիական պարային ներկայացման իրականացմանը: Անչափ կարեւորում եմ, որ հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակում մենք նաեւ հնարավորություն կունենանք «Նռան գույնը» պարային ներկայացումը տեսնել Երեւանում: Շնորհակալ ենք համագործակցության համար եւ պատրաստակամ ենք աջակցելու թատերախմբի մյուս նախաձեռնություններին»:*



Ֆրանսիական *«Սաթէ-Աթղը»* թատերական միության ղեկավար Սաթէ Խաչատրյանը շնորհակալություն է հայտնել հանդիպման համար, այնուհետեւ հանգամանորեն ներկայացրել *«Սաթէ-Աթղը»* թատերական միության գործունեությունը՝ ընդգծելով, որ միության հիմնական գործառույթն ուղղված է Ֆրանսիայում հայկական մշակույթի տարածմանն ու հանրահռչակմանը: Նրա տեղեկացմամբ՝ ֆրանսիական միջավայրում արհեստավարժ արվեստագետների հետ բեմադրվել են հայկական էպոսը, Թումանյանի հեքիաթները, Կոմիտասին նվիրված ներկայացում: Այս համատեքստում շարունակվում է քաղաքականության իրականացումը, եւ հայ-ֆրանսիական համագործակցության արդյունքում հանդիսատեսի դատին կհանձնվի Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված *«Նռան գույնը»* պարային ներկայացումը:

Սաթէ Խաչատրյանի ներկայացմամբ՝ թատերական միությունը Ֆրանսիայում գործում է 2013 թվականից, իսկ 2016 թվականից գործունեություն ծավալում նաեւ Հայաստանում: Աշխատել են Գյումրու, Վանաձորի, Գավառի, Գորիսի դրամատիկական թատրոնների հետ:

*«Սաթէ-Աթղը»* թատերական միության ղեկավարը ներկայացրել է *«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական պարային ներկայացման կազմակերպչական եւ ստեղծագործական խմբի անդամներին եւ նշել, որ նախագիծն իրականացվում է *«Տոբոգան»* եւ *«Գասկոն»* թատրոնների հետ համատեղ: Նրա խոսքով՝ ներկայացման թիմի բոլոր անդամները ոլորտի արհեստավարժ մասնագետներ են:

*«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական պարային ներկայացման կազմակերպչական եւ ստեղծագործական խմբի անդամները շնորհակալություն են հայտնել նախարարին նախագծին աջակցելու համար: Նրանց դիտարկմամբ՝ *«Նռան գույնը»* պարային ներկայացումը խթան կհանդիսանա ոչ միայն հայ-ֆրանսիական մշակութային հարաբերությունների զարգացմանը, այլեւ բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը:

Ժաննա Անդրեասյանը գոհունակություն է հայտնել հայ-ֆրանսիական գործակցության կապակցությամբ եւ ընդգծել, որ անչափ խրախուսելի է ակտիվ համագործակցությունը հայկական ու ֆրանսիական թատրոնների միջեւ՝ հետամուտ լինելով, որ այն դառնա կայուն, զարգացող, շարունակական փոխգործակցություն: Այս համատեքստում նախարարը պատրաստակամություն է հայտնել քննարկել համատեղ ծրագրերն ու հնարավորինս աջակցել այդ ծրագրերի իրականացմանը:

*«Դպրոցական սնունդ»*

# Գեղաշենի միջնակարգ դպրոցում

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացված *«Դպրոցական սնունդ»* ծրագրի՝ ՀՀ կառավարությանը հանձնելուն նվիրված միջոցառման շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** եւ ՊՀԾ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն եւ ներկայացուցիչ **Նաննա Սկաուն** այցելել են Կոտայքի մարզի Գեղաշենի միջնակարգ դպրոց:

Այցին մասնակցել են նաեւ ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղարի տեղակալ **Վահրամ Գասպարյանը,** *«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն»* հիմնարկի տնօրեն **Սաթենիկ Մկրտչյանը,** Ռուսաստանի Սոցիալական արդյունաբերական սննդի ինստիտուտի նախագահ **Վլադիմիր Չերնիգովը,** ՌԴ ֆինանսների նախարարության եւ ՌԴ ճյուղայի սննդի ինստիտուտի ներկայացուցիչներ, Կոտայքի եւ Տավուշի մարզերի պաշտոնատար անձինք:

Այցի ընթացքում փոխնախարարին եւ հյուրերին ներկայացվել են ՊՀԾ-ի ներդրումները ինտենսիվ հատապտուղների այգիներում, արեւային կայաններում, անձրեւաջրերի կառավարման, կենսահումուսի արտադրության եւ դպրոցը համայնքի զարգացման շարժիչ ուժի վերածող պոտենցիալ բիզնես մոդելում:

Այցի մասնակիցները շրջել են դպրոցում, եղել խոհանոցային հատվածում եւ ճաշարանում, որտեղ երեխաները սնվում էին, ինչպես նաեւ համտեսել ուտեստները:

Գեղաշենի միջնակարգ դպրոցը *«Դպրոցական սնունդ»* ծրագրին միացել է 2018 թվականին: Դպրոցի շահագործումից ի վեր՝ ճաշարանային հատվածը երբեւէ չի վերանորոգվել եւ եղել է անբարեկարգ վիճակում: Պարենի համաշխարհային ծրագրի ֆինանսական ներդրումների եւ դպրոցի տնտեսած միջոցների հաշվին այս տարի միայն հնարավոր է եղել ունենալ բարեկարգ եւ լուսավոր ճաշարան: Ծրագրի շրջանակում համատեղ ուժերով դպրոցը ձեռք է բերել նաեւ խոհանոցային անհրաժեշտ պարագաներ եւ սարքավորումներ: Դպրոցում տաք սնունդ է ստանում 1-4-րդ դասարանների եւ նախակրթարանի շուրջ 300 երեխա՝ 3 հերթափոխով:

Հյուրերը ծանոթացել են նաեւ պահեստի պայմաններին, որտեղ պահեստավորված էին դպրոցի հատապտղային այգուց հավաքված մորու պաշարները, ինչպես նաեւ շրջել այգում: Այն հիմնվել է 2021 թվականին *«Դպրոցական սնունդ»* ծրագրի շրջանակում՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային կազմակերպության միջոցներով, Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ: Ի սկզբանե ասֆալտապատ տարածքը կանաչապատ գոտու վերածելը մեծ ջանք է պահանջել, որին մասնակցել են դպրոցի անձնակազմը, ծնողներն ու աշակերտները:

Այնուհետեւ դպրոցի դահլիճում ներկաները մասնակցել են *«Դպրոցական սնունդ եւ երեխաների բերեկեցություն»* հիմնարկի նախաձեռնությամբ մշակված ու *«Փոփոխությունների թատրոնի»* կողմից պատրաստված ու բեմադրված *«Ճամփորդություն առողջ սննդի տիեզերքում»* ինտերակտիվ ներկայացմանը, որի ընթացքում հերոսները պտտվել են առողջ սննդի մոլորակներում ու առանձնացրել առողջ սնունդը՝ այսպիսով երեխաներին խաղի օգնությամբ սովորեցնելով առողջ սնվելու գաղտնիքները:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***





Հայաստան - Գերմանիա

## Համատեղ ծրագրերի իրականացման հեռանկարներ

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության եւ հետազոտությունների դաշնային նախարարության խորհրդարանական պետքարտուղար **Յենս Բրանդենբուրգի** գլխավորած պատվիրակությանը:



Հանդիպմանը ներկա են եղել Գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը** եւ եւ ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ եւ լիազոր դեսպան **Վիկտոր Ռիխտերը:**

Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին եւ կարեւորել հայ-գերմանական հաջող համագործակցության շարունակականությունը տարբեր ոլորտներում: Նախարարը, մասնավորապես, անդրադարձել է Հայաստանում կրթության եւ գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումներին՝ նշելով, որ Գիտության կոմիտեն վերակազմավորվում է Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի: Անդրադարձ է եղել նաեւ Գերմանիայի կրթական ծրագրերի փորձին, որոնցով հետաքրքրված են հայաստանցի ուսանողներն ու դասախոսական կազմը:

Գերմանացի գործընկերը՝ Յենս Բրանդենբուրգը, շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ վերահաստատել գիտության ոլորտում հայ-գերմանական ընթացիկ ծրագրերի խորացման պատրաստակամությունը, ինչպես նաեւ եվրոպական կրթական հարթակներում Հայաստանի լիարժեք ներկայացուցչության ապահովման հարցում գերմանական աջակցությունը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը գերմանացի գործընկերների ուշադրությունն է հրավիրել Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի ուսանողների՝ Հայաստանում ուսումը շարունակելու եւ սկսելու անհնարինության փաստի վրա: *«Մենք բարձր ենք գնահատում Գերմանիայի կառավարության ջանքերը՝ ուղղված ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը եւ ակնկալում ենք նաեւ աջակցություն՝ ուսանողների կրթության իրավունքի լիարժեք իրացման հարցում»,-* նշել է ԿԳՄՍ նախարարը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

## ՀՀ մարզերում կկառուցվի 172 ուսումնական հաստատություն

*սկիզբը՝ էջ 2*

Շիրակի մարզում ընտրվել է 27 բնակավայր, որոնցից 4-ում կծեւավորվեն կրթահամալիրներ, 9-ի համար կկառուցվեն նոր դպրոցների շենքեր, 5-ում կկառուցվեն միայն մարզադահլիճների եւ հանդիսությունների դահլիճների մասնաշենքերը, իսկ ուսումնական մասնաշենքերը կվերանորոգվեն: Դպրոցներից մեկի համար անհրաժեշտ է լրացուցիչ դիտարկում եւ 4-ի մասով անհրաժեշտ կլինի հետագայում իրականացնել միայն ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Ընդ որում՝ խնայելով ժամանակային եւ ֆինանսական ռեսուրսները՝ որոշվել է փաստաթղթերը ձեռք բերել առկա (տարիների ընթացքում ձեռքբերված) նախագծերի տեղակայման միջոցով (բացառությամբ մեկ դպրոցի, որի համար անհրաժեշտ է անհատական նախագիծ):

ՀՀ Լոռու եւ Շիրակի մարզերի հաստատություններն են՝

**Կրթահամալիրներ**

***ՀՀ Լոռու մարզ***

*գ. Հարթագյուղի կրթահամալիր*

*գ. Լորուտի կրթահամալիր*

*ք. Ալավերդու կրթահամալիր (ք. Ալավերդու թիվ 4 հիմնական դպրոցի տեղակայման վայրում)*

*ք. Թումանյանի կրթահամալիր (ք. Թումանյանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի տեղակայման վայրում)*

*գ. Քարինջի կրթահամալիր*

*գ. Բազումի կրթահամալիր*

*գ. Միխայլովկայի կրթահամալիր*

*գ. Լեջանի կրթահամալիր*

*գ. Կաթնառատի կրթահամալիր*

*գ. Գարգառի կրթահամալիր*

*գ. Նորաշենի կրթահամալիր*

***ՀՀ Շիրակի մարզ***

*գ. Քեթիի կրթահամալիր*

*գ. Հայրենյացի կրթահամալիր*

*գ. Բյուրակնի կրթահամալիր*

*գ. Բավրայի կրթահամալիր*

**Դպրոցներ**

***ՀՀ Լոռու մարզ***

*գ. Ճոճկանի միջնակարգ դպրոց*

*գ. Արեւածագի Կգ Մելիքսեթյան անվան միջնակարգ դպրոց*

*գ. Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոց*

*ք. Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց (դառնալու է միջնակարգ)*

*ք. Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոց*

*գ. Աքորու միջնակարգ դպրոց*

*ք. Ալավերդու Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց*

*ք. Վանաձորի Ստ.Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց*

*գ. Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց*

*գ. Դսեղի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց*

*գ. Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց*

***ՀՀ Շիրակի մարզ***

*գ. Սարատակի միջնակարգ դպրոց*

*գ. Ամասիայի միջնակարգ դպրոց*

*գ. Ջրափիի միջնակարգ դպրոց*

*գ. Շիրակավանի միջնակարգ դպրոց*

*գ. Երազգավորսի միջնակարգ դպրոց*

*ք. Գյումրու Գ.Սարյանի անվան թիվ 24 հիմնական դպրոց*

*գ. Մայիսյանի միջնակարգ դպրոց*

*գ. Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց*

*գ. Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց*

**Դպրոցների մարզադահլիճների եվ հանդիսությունների դահլիճների մասնաշենքեր**

***ՀՀ Լոռու մարզ***

*գ. Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց*

*գ. Ղուրսալու միջնակարգ դպրոց*

***ՀՀ Շիրակի մարզ***

*գ. Ջաջուռի միջնակարգ դպրոց*

*գ. Մուսայելյանի միջնակարգ դպրոց*

*գ. Կառնուտի միջնակարգ դպրոց*

*գ. Սարալանջի միջնակարգ դպրոց*

*գ. Ցողամարգի միջնակարգ դպրոց:*

**Հ. Հ.**

## Հայտագրվել է 5000 ուսուցիչ

*սկիզբը՝ էջ 1*

*«Ատեստավորմանը կարող են մասնակցել նաեւ «Հանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխանող եւ տվյալ առարկաների մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչ չաշխատող անձինք. այս պահին դիմողների թիվը շուրջ 320 է»,-* տեղեկացրել է Արաքսիա Սվաջյանը: Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հնարավորություն ունեն նաեւ ուսումնական հաստատություններում դասավանդող՝ միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչները, որոնք, համաձայն *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի՝ օգոստոսի 20-ից պետք է ազատվեն աշխատանքից, քանի որ չեն ապահովում ուսուցչին ներկայացվող պահանջները: Նշված կարգավորումը չի տարածվի միջին մասնագիտական կրթությամբ այն ուսուցիչների վրա, որոնք կմասնակցեն կամավոր ատեստավորմանը եւ կապահովեն նվազագույնը 60 տոկոս արդյունք:

**Միջին մասնագիտական կրթություն ունեցող 1370 ուսուցչից այս պահի դրությամբ հայտագրվել է շուրջ 800-ը:**

*«Այն ուսուցիչները, որոնք նախորդ տարի մասնակցել, բայց բավարար արդյունք չեն գրանցել, այս տարի եւս կարող են մասնակցել կամավոր ատեստավորմանը»,-* ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ հավելելով, որ սահմանված շեմը չհաղթահարած 760 ուսուցչից 385-ն այս տարի հայտագրվել է կամավոր ատեստավորմանը մասնակցելու նպատակով:

Արաքսիա Սվաջյանի խոսքով՝ նախորդ տարի բավարար արդյունք չցուցաբերած ուսուցիչներին աջակցելու նպատակով ՀՀ 4 բուհերում նախարարության աջակցությամբ իրականացվում են վերապատրաստման դասընթացներ: Նրանց մեծ մասը՝ 700 ուսուցիչ, հայտագրվել է վերապատրաստման համար:

*«Լիահույս ենք՝ այդ ուսուցիչները վերապատրաստումների արդյունքում, բացի շեմը հաղթահարելուց, նաեւ հավելավճար ստանալու հնարավորություն կունենան»,-* հավելել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Ատեստավորմանը մասնակցում են նաեւ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող մասնագետները:

Բոլոր առարկաների կամավոր ատեստավորման ուղեցույցներն արդեն հասանելի են ԿԳՄՍՆ եւ ԳԹԿ կայքերում:

Երեւանի թիվ 29 դպրոցի ուսուցչուհի Նաիրա Կոսյանը դրական է գնահատել կամավոր ատեստավորման միջոցով ուսուցիչների կարողությունների զարգացման եւ աշխատավարձի բարձրացման գործընթացը: *«Սա ողջունելի գործընթաց է, որովհետեւ ըստ արժանվույն գնահատվում են այն ուսուցիչները, որոնք շարունակաբար հետաքրքրվել են իրենց առարկայով, աշխատել են, չեն մնացել տեղում»,-* ասել է Նաիրա Կոսյանը: Ուսուցչի դիտարկմամբ՝ տվյալ մասնագետի գիտելիքները հնարավոր է ստուգել նաեւ ավելի քիչ թվով, բայց խելամիտ առաջադրանքներով՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները եւ խուսափելով տեխնիկական խնդիրներից: Նաիրա Կոսյանը նշել է նաեւ ռուսական կրթությամբ եւ ռուսերենով դասավանդող ուսուցիչների համար թեստեր կազմելու անհրաժեշտությունը:

*«Ուսուցչի աշխատավարձը բարձրացնող ցանկացած ծրագիր գովելի է: Այս գործընթացում հատկապես կարեւոր է այն, որ անցողիկ շեմը չհաղթահարելը ուսուցիչների համար դատավճիռ չէ, եւ նրանք կարող են նորից փորձել»,-* ասել է Ֆիզմաթ դպրոցի ուսուցիչ Տիգրան Սարդարյանը:

Նա նշել է, որ, այդուհանդերձ, ծրագիրը դեռ կատարելագործվելու կարիք ունի: Տ. Սարդարյանը մտահոգ է՝ արդյո՞ք ծրագիրն ապահովում է նոր ուսուցիչների մուտքը դպրոց եւ կրթության բարձր որակ: *«Երկրորդ տարին է՝ գործարկվում է ծրագիրը, բայց դեռ ուսուցչի պակաս ունենք: Կարծում եմ՝ պետք էր առանց նախապայմանների բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը: Դա զգալիորեն կբարձրացներ ուսուցչի աշխատանքի գրավչությունը, քանի որ տարեց մասնագետներին փոխարինող երիտասարդներ քիչ կան»,-* իր դիտարկումն է ներկայացրել Տիգրան Սարդարյանը:

*«Ուսուցիչների մանկավարժական հմտությունների զարգացման հնարավորություն տրված է նաեւ տարակարգի միջոցով: Նոր մեխանիզմ ունենք, որն արդեն գործարկվել է: Դրա միջոցով մինչեւ 50 տոկոս աշխատավարձի ավելացման հնարավորություն է տրված 4-րդ աստիճանի տարակարգի դեպքում»,-* ասել է Արաքսիա Սվաջյանը եւ նշել, որ հետաքրքրությունը բավականին մեծ է, եւ արդեն կան ուսուցիչներ, որոնք ստացել են տարակարգի 4-րդ աստիճան:

Փոխնախարարի խոսքով՝ ուսուցիչներին խրախուսելու տարբեր մեխանիզմներ են մշակվում. *«Հանրակրթության մասին օրեքի վերջին փոփոխության համաձայն՝ մանկավարժական կրթություն ստացող ավարտական կուրսի ուսանողները կարող են աշխատել գյուղական այն դպրոցներում, որտեղ ուսուցիչների պակաս կա, իհարկե, մենթորական աջակցությամբ»:*

Ուսուցիչների խրախուսմանը միտված՝ սեպտեմբերից ներդրվելու է ֆինանսավորման նոր կարգ, ըստ որի՝ ՀՀ բոլոր ուսուցիչների համար կլինի դրույքաչափի փոփոխություն՝ համաչափ բաշխվածությամբ: Դպրոցների ֆինանսավորումը լինելու է դասարան թվով՝ նախկին աշակերտ թվի փոխարեն:

Ի լրումն այս ծրագրի՝ գյուղական մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների մեկ դրույքից պակաս ծանրաբեռնվածությամբ ուսուցիչների դրույքաչափը կամբողջացվի մինչեւ մեկ դրույք, բայց հավելումը չի կարող լինել ավելի, քան կես դրույքը: *«Այսինքն՝ ուսուցիչները մեկ դրույք աշխատավարձ ստանալու հնարավորություն կունենան: Իսկ հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչները հավելավճար կստանան»,-* եզրափակել է Արաքսիա Սվաջյանը:

Նախարարի տեղակալն անդրադարձել է նաեւ նոր չափորոշչի ներդրման, դպրոցների ֆինանսավորման նոր մոդելի, ուսուցիչների աշխատավարձի եւ այլ խնդիրների մասին հարցերին:

Շնորհանդես

# Վաղուց սպասված արժեքավոր ուսումնական ձեռնարկ

## (Արարատ ԱՂԱՍՅԱՆ՝ *«արվեստի պատմություն. կերպարվեստ»*)

ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Աղասյանի** *«Արվեստի պատմություն. կերպարվեստ»* արժեքավոր ու վաղուց սպասված եռահատոր ուսումնական ձեռնարկի 2-րդ գրքի շնորհանդեսը:

Դասագիրքը մեկ հարկի տակ էր մեկտեղել գիտության ու մշակույթի, ուսանողության, հանրության լայն շրջանակների ներկայացուցիչներին: Հընթացս շնորհանդեսի՝ դասագիրքը ներկայացրեցին պրոֆեսոր Ա. Աղասյանի գիտական դպրոցի ներկայացուցիչները՝ Արարատ Աղասյանի առաջին ասպիրանտ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Արթուր Ավագյանը**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա Քամալյանը** եւ ԵՊՀ Հայ արվեստի պատմության եւ տեսության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Հռիփսիմե Վարդանյանը:** Արդեն արվեստաբան ուսանողության եւ դասախոսների սեղանի գիրքը դարձած ուսումնական ձեռնարկի ծնունդը շնորհավորեցին հայ արդի վաստակաշատ արվեստաբան, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հրավարդ Հակոբյանն** ու *«Արմավ»* հրատարակչության տնօրեն, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու **Արմեն Ավանեսյանը,** ով նաեւ դասագրքի խմբագիրն է:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հեղինակը: Արարատ Աղասյանը տեղեկացրեց, որ արդեն ավարտել եւ հրատարակության է հանձնել ուսումնական ձեռնարկի վերջին՝ երրորդ հատորը. այն ընթերցողի սեղանին կդրվի մինչեւ տարեվերջ:



Իսկ ամեն ինչ սկսվել էր տարիներ առաջ:

2019-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանդես եկավ արվեստի դպրոցների ու գեղարվեստական ուսումնարանների աշակերտների եւ ուսուցիչների համար նախատեսված *«Արվեստի պատմություն. կերպարվեստ»* եռահատոր դասագիրք ստեղծելու նախաձեռնությամբ: ԿԳՄՍՆ մտահղացմամբ՝ հայկական իրականության մեջ առաջին անգամ նախատեսվում էր ստեղծել կերպարվեստի ընդհանուր պատմությանը նվիրված հայերեն ոչ թարգմանական առաջին ուսումնական ձեռնարկը:

Ակնհայտ է այս նախաձեռնության կարեւորությունը, քանի որ կերպարվեստի հետ ծանոթությունն անհրաժեշտ է սկսել հենց դպրոցում եւ շարունակել միջնակարգ եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Գաղտնիք չէ, թե ինչ կարեւոր դեր ունի կրթությունը որեւէ ժողովրդի կյանքում: Ակնհայտ է, որ կրթված, գեղարվեստական բարձր ճաշակ ունեցող սերունդ ունենալու համար անհրաժեշտ են մայրենի լեզվով համապատասխան դասագրքեր եւ ուսումնական ձեռնարկներ:

ԿԳՄՍՆ փոխնախարար, արվեստագիտության թեկնածու Արա Խզմալյանը ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երաժշտական եւ արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում եւ հրատարակում» ծրագրի շրջանակներում *«Արվեստի պատմություն. կերպարվեստ»* եռամաս ուսումնական ձեռնարկի ստեղծման խնդրանքով դիմեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, մեզանում հայ եւ համաշխարհային կերպարվեստի փայլուն գիտակ պրոֆեսոր Արարատ Աղասյանին: Բազմավաստակ գիտնականն ու գիտության հմուտ կազմակերպիչը թեեւ երկար տարիներ զբաղվել էր մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում եւ Երեւանի պետական համալսարանում, սակայն վերջին տարիներին հեռացել էր մանկավարժությունից՝ իր ողջ ժամանակը նվիրելով գիտական ու գիտակազմակերպական աշխատանքին: Ու, թեեւ դասագրքաստեղծ հույժ կարեւոր ու պատասխանատու ոլորտը բավական հեռու էր պրոֆեսոր Աղասյանից եւ տեղ չէր գտնում նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում, սակայն, գիտակցելով այս ձեռնարկի կարեւորությունն ու անհրաժեշտությունը մատաղ սերնդի եւ ուսանող երիտասարդության գեղարվեստական կրթության գործում, նա սիրով ձեռնամուխ եղավ կերպարվեստի պատմությանը նվիրված, հայերեն լեզվով շարադրված՝ (ոչ թարգմանական) առաջին դասագրքի ստեղծման գործին:

Ուսումնական ձեռնարկը բաղկացած է երեք գրքից:

Առաջին գիրքը, որն ընդգրկում է նախնադարյան ժամանակներից մինչեւ եվրոպական Վերածննդի դարաշրջանի համաշխարհային եւ հայ կերպարվեստի պատմությունը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ *«Արմավ»* հրատարակչությունը լույս ընծայեց 2020-ին (Աղասյան Ա., Արվեստի պատմություն, կերպարվեստ, գիրք 1, Ե., *«Արմավ»,* 2020, 256 էջ):

2022-ին հրատարակվեց դասագրքի 2-րդ հատորը, որտեղ հեղինակը ներկայացրել է եվրոպական Վերածննդի դարաշրջանի կերպարվեստից մինչեւ 20-րդ դարասկզբի կերպարվեստի համառոտ պատմությունը եւ այդ համատեքստում դիտարկել է նաեւ հայկական կերպարվեստը (Աղասյան Ա., Արվեստի պատմություն, կերպարվեստ, գիրք 2, Ե., *«Արմավ»,* 2022, 308 էջ):





Նշենք աննախադեպ ուսումնական ձեռնարկի կարեւոր առանձնահատկություններից մի քանիսը:

*- Հեղինակը ձեռնարկի էջերում զետեղել է բացատրական բառարան՝ աշակերտների համար մատչելի կերպով բացատրելով կերպարվեստին, դեկորատիվ-կիրառական արվեստին, ճարտարապետությանը վերաբերող հասկացությունները, կրոնական եւ դիցաբանական կերպարների եւ խորհրդանիշերի իմաստն ու նշանակությունը եւ այլն:*

*- Տեքստում տեղավորված գունավոր մեծաքանակ վերատպություններն առավել հասկանալի են դարձնում շարադրանքը եւ նպաստում պատանիների գեղագիտական ճաշակի ձեւավորմանը: Նմանատիպ ձեռնարկների համար ուշագրավ եւ հետաքրքիր նորամուծություն էր յուրաքանչյուր վերատպությանն ուղեկցող գրությունը՝ արվեստի գործի հեղինակի անվան, վերնագրի, թվագրման եւ պահպանման վայրի վերաբերյալ տեղեկատվությամբ:*

*- Տեքստն ուղեկցվում է ֆիլմերով: Լուսանցքներում նշված շտրիխկոդերի միջոցով հնարավոր է youtube-ով դիտել հայերեն եւ ռուսերեն լեզուներով ուսուցողական ֆիլմեր՝ վիդեոդասագրքի դասեր, անիմացիաներ, հանրամատչելի-ճանաչողական վավերագրական ֆիլմեր, ոլորտի լրջագույն մասնագետների դասախոսություններ: Ֆիլմերն ընթերցողն տեղեկություններ են հաղորդում հայկական եւ համաշխարհային արվեստի, մշակույթի, առանձին հուշարձանների, ականավոր վարպետների, պատմական դարաշրջանների, տարբեր երկրների ու ժողովուրդների, դիցաբանական աստվածների եւ հերոսների, պատմական նշանավոր դեմքերի եւ թագավորական տոհմերի մասին:*

Դասագրքի կարեւոր առանձնահատկությունն այն է, որ վաստակաշատ գիտնականը պրոֆեսիոնալ բարձր մակարդակով իր տեքստը շարադրել է աշակերտներին մատչելի ու հասկանալի լեզվով:

Աշխատությունը, որը եզակի, խիստ արդիական եւ մեզանում իրապես նշանակալի երեւույթ է, բնականաբար, լայն արձագանք գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Առաջին գրքի մասին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանի եւ արվեստագիտության թեկնածու Մովսես Հերկելյանի գրախոսականները տպագրվեցին ինչպես հայկական ակադեմիական (ՀՀ ԳԱԱ *«Գիտություն»* ամսաթերթ, *«Արվեստագիտական հանդես»* եւն), այնպես էլ սփյուռքահայ մամուլում (*«Ազդակ»* Լիբանան եւն), նկարահանվեց ֆիլմ՝ https://m.youtube.com/watch?v=tltsah9PnAg:

Երկրորդ գրքի մասին ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի 2023թ. 1-ին համարում տպագրվեց արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանի գրախոսությունը: Առաջիկայում ակադեմիական մյուս գիտական պարբերականներում լույս կտեսնեն Աելիտա Դոլուխանյանի, Մարգարիտա Քամալյանի եւ Հռիփսիմե Վարդանյանի գրախոսությունները եւն:

Թեեւ Ա.Աղասյանի *«Արվեստի պատմություն, կերպարվեստ»* ուսումնական ձեռնարկը նախատեսված է արվեստի դպրոցների եւ գեղարվեստի ուսումնարանների ուսուցիչների եւ աշակերտների համար, կիրառվում է բուհերի՝ կերպարվեստի պատմությանը նվիրված դասընթացներում, սակայն, այն պահանջված է նաեւ ոչ մասնագետների եւ արվեստով հետաքրքրվող յուրաքանչյուր քաղաքացու համար:



**Վարդգես Սուրենյանց.** ***Զաբել թագուհու վերադարձը գահին***

***Աննա ԱՍԱՏՐՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,***
***արվեստագիտության դոկտոր,***
***պրոֆեսոր***

# Կրթությունն աշխարհում. Չինաստան

Չինաստանում մշակութային հեղափոխության ավարտը նշանավորվեց կրթական համակարգի փոփոխությամբ: Այն վերակողմնորոշվեց տնտեսության զարգացման ուղղությամբ: Դրանից հետո անցել է 40 տարի: Արդյունքները ապշեցուցիչ են, եւ տարեցտարի ավելանում է չինական ուսումնառություն փնտրող օտարերկրյա ուսանողների թիվը:



## Չինական նախադպրոցական կրթական համակարգ

Չինաստանում երեխաներին դպրոց մտնելուց առաջ դաստիարակելու համակարգը կազմակերպվել է 1985 թվականի կրթական բարեփոխումներով սահմանված սկզբունքների հիման վրա: Մասնավորապես՝ այդ բարեփոխման ծրագրերի համաձայն՝ նախադպրոցական հաստատությունները պետք է ապահովեին.

- *պետական կազմակերպությունները,*
- *արտադրական թիմերը,*
- *քաղաքային իշխանությունները,*
- *համայնքները եւ սոցիալական խմբերը:*

Նախադպրոցական կրթության հովանավորությունը կախված էր ինչպես մասնավոր կազմակերպություններից, այնպես էլ տարբեր պետական կազմակերպությունների սոցիալական ծառայություններից: 1985 թվականի (ռեֆորմը) բարեփոխումը նախատեսում էր վճարովի նախադպրոցական կրթության ներդրում, ինչպես նաեւ դաստիարակների վերապատրաստման ուժեղացում:

## Չինական նախակրթարաններ

Չինացի երեխաները սովորաբար նախակրթարան են սկսում հաճախել 3 տարեկանից: Նախադպրոցական կրթության վերջնական տարիքը 6 տարեկանն է: Նախակրթարանի եռամյա շրջանը սովորաբար բաժանվում է երեք փուլի: Առաջին փուլը նախնական խումբն է (Xiaoban): Երկրորդ փուլը միջին խումբն է (Zhongban): Երրորդ փուլը ավագ խումբն է (Daban): Յուրաքանչյուր խմբի շրջանը 1 տարի է:

Չինական մանկապարտեզների մեծ մասը երեխայի խնամքի վրա կենտրոնացած է ամբողջ աշխատանքային օրվա համար: Երեխաներն ապահովված են երեքանգամյա սնունդով, հարմարավետ կեցության պայմաններով: Դաստիարակների մեծամասնությունը տարրական դասարանների ուսուցիչների կրթություն ունի: Այդ հանգամանքով պայմանավորված՝ չինական նախադպրոցական հաստատություններում կրթության որակը բարձր մակարդակի վրա է:

Երեխաները ոչ միայն խաղում եւ հանգստանում են, այլեւ զարգանում են ինտելեկտուալ առումով, սովորում են պարել, երգել, նկարել եւ կատարել պարզագույն աշխատանքներ:

## Չինական տարրական դպրոց

Վեց տարեկանը լրացած երեխաները հաճախում են տարրական դպրոց: Տարրական կրթությունը պարտադիր է երկրի բոլոր քաղաքացիների համար: Տարրական դպրոցում ուսումնառությունը 6 տարի է:

Հաստատությունների մեծ մասը դասերը անցկացնում են չինարենով: Կան նաեւ դպրոցներ, որտեղ սովորում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Եթե նման դպրոցում գերակշռում են ազգային փոքրամասնությունները, ապա չինարենը երկրորդ պլան է մղվում՝ տեղը զիջելով ազգային փոքրամասնության լեզվին:

Ուսումնական տարին ունի երկու կիսամյակ: Սկսվում է սեպտեմբերին եւ ավարտվում հուլիսին: Դասերն անցկացվում են հնգօրյա ռեժիմով: Չինական տարրական դպրոցի դասընթացի պարտադիր առարկաներն են.

- *չինարեն,*
- *մաթեմատիկա,*
- *հասարակագիտություն,*
- *բնություն,*
- *ֆիզիկական կուլտուրա,*
- *գաղափարախոսություն եւ բարոյականություն,*
- *երաժշտություն,*
- *նկարչություն,*
- *տեխնոլոգիա:*

Օտար լեզուների ուսուցումը տարրական դպրոցում հիմնականում կազմակերպվում է ֆակուլտատիվ խմբակներով: Սովորողները տարրական դպրոցն ավարտում են 12-13 տարեկանում: Մինչեւ 1990 թվականը շրջանավարտները ավարտական քննություն էին հանձնում, որպես կանոն, երկու առարկաներից՝ չինարեն եւ մաթեմատիկա: Քննությունն այժմ չեղարկվել է: Տարրական դպրոցից հետո երեխաները անցնում են միջնակարգ դպրոցի առաջին մակարդակին:

## Միջնակարգ կրթությունը Չինաստանում (առաջին մակարդակ)

Չինաստանի միջնակարգ կրթության համակարգը պայմանականորեն ներկայացված է երկու մակարդակով՝ ստորին (առաջին) եւ վերին (երկրորդ): Առաջին մակարդակը նախատեսված է 12-ից 15 տարեկան աշակերտների եռամյա ուսման համար եւ պարտադիր կրթության ավարտական փուլն է: Աշակերտների ծնողներին տրվում է երեք տարբերակ՝ դպրոց ընտրելու համար.

- *օգտագործելով համակարգչային ընտրություն,*
- *ինքնուրույն՝ հաշվի առնելով բոլոր ցանկությունները,*
- *կապված բնակության վայրի հետ:*

Համակարգչային ընտրությունը դպրոցների պատահական բաշխումն է: Այս կերպ ընտրված հաստատությունները ապահովում են միայն ստանդարտ կրթական պայմաններ:

Ինքնուրույն ընտրությունը թույլ է տալիս գտնել լավ ենթակառուցվածքներով եւ աշակերտի ծնողների կարիքները բավարարող դպրոց: Սակայն այս դեպքում լրացուցիչ ծառայությունների համար կրթության ծախսերը ավելանում են:

Տեղական դպրոցի ընտրությունը նվազեցնում է ծախսերը՝ կախված տրանսպորտի հետ, սակայն միշտ չէ, որ երաշխավորում է կրթության ցանկալի որակ:

Առաջին աստիճանի միջնակարգ դպրոցի 3 տարիների ընթացքում չինացիները սովորում են առնվազն 13 հիմնական առարկա.

- *Չինարեն,*
- *Մաթեմատիկա,*
- *Անգլերեն,*
- *Ֆիզիկա,*
- *Քիմիա,*
- *Պատմություն,*
- *Քաղաքագիտություն,*
- *Աշխարհագրություն,*
- *Կենսաբանություն,*
- *Ինֆորմատիկա,*
- *Երաժշտություն,*
- *Նկարչություն,*
- *Ֆիզիկական կրթություն:*

Ուսումնառության ընթացքում անհրաժեշտ է բոլոր առարկաներից հավաքել ընդհանուր առմամբ առնվազն 60 միավոր: Դա ավարտական քննությունների մասնակցելու պայմանն է: Այն աշակերտներին, ովքեր չեն կարողացել հավաքել միջին թվաբանական 60 միավոր, թողնում են նույն դասարանում: Որպես կանոն, քննության համար նշանակվում են հետեւյալ առարկաները.

- *Չինարեն,*
- *Մաթեմատիկա,*
- *Քիմիա,*
- *Ֆիզիկա,*
- *Օտար լեզու,*
- *Քաղաքագիտություն:*

Քննությունը հաջող հանձնելով եւ արդյունքում վկայական ստանալով՝ ավարտում է չինական պարտադիր կրթական ծրագրի ցիկլը: Այնուհետեւ ճանապարհը բացվում է լրացուցիչ միջնակարգ կրթության ՝ միջնակարգ դպրոցի երկրորդ աստիճանի համար:

## Միջնակարգ կրթությունը Չինաստանում (երկրորդ մակարդակ)

Չինաստանի ավագ կրթական աստիճանում՝ միջնակարգ դպրոցի երկրորդ մակարդակում կրթությունը սկսվում է 15 տարեկանից եւ շարունակվում մինչեւ 18-19 տարեկանը: Դիմորդներին առաջարկվում է կրթության երկու տեսակի ընտրություն՝ ակադեմիական կամ մասնագիտական: Ուսուցումը վճարովի է: Մեկ տարվա ուսման արժեքը միջինում արժե 4-6 հազար յուան (351 233,64 դրամ):

Ուսանողների մեծ մասն ընտրում է մասնագիտական ուղղությունը: Այդ տարբերակը, ի վերջո, ավելի շատ հնարավորություններ է տալիս ուսումն ավարտելուց հետո աշխատանքի տեղավորման համար: Հարկ է նշել, որ ավագ միջնակարգ դպրոցը ունի բարձր հեղինակություն չինական բնակչության շրջանում: Հետաքրքրությունը միանգամայն հասկանալի է՝ այդ դպրոցների շրջանավարտների համար ավելի հեշտ է ընդունվել քոլեջներ եւ բուհեր, նաեւ հնարավորություն կա ձեռք բերել աշխատանքային մասնագիտություններ:

*շարունակությունը՝ էջ 22*





# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

## Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի հունիսի 9-ի No641-Ա հրամանի հավելվածի

*սկիզբը՝ նախորդ համարում*

### Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թվականի մայիսի 20-ի N 09-Ն հրաման

**Հարց 382.** Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

*- եթե գյուղական բնակավայրում գտնվող հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչեւ սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8*

**Հարց 383.** Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

*- արտակարգ եւ ֆորս մաժորային իրավիճակներում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն):*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8*

**Հարց 384.** Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

*- դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) երեխաների համար՝ առավելագույնը 1 կիսամյակ, կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ առավելագույնը 20 օր, եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8*

**Հարց 385.** Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

*- այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատեւ բուժման կարիք:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8*

**Հարց 386.** Ո՞վ է պատասխանատու հեռավար ուսուցման համար այն հաստատությունում, որտեղ չկա տվյալ առարկայի մասնագետ եւ դասերն անցկացվում են հեռավար եղանակով.

*- Այն ուսումնական հաստատություններում, որտեղ չկա տվյալ առարկայի մասնագետ եւ դասերն իրականացվում են հեռավար, տնօրենի հրամանով՝ տվյալ հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը նշանակվում է ուսումնական գործընթացի կազմակերպման եւ վերահսկման պատասխանատու:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 19*

**Հարց 387.** Ի՞նչ նյութեր կարող է օգտագործել հաստատությունը՝ հեռավար ուսուցման համար:

*- Ուսումնական հաստատությունը, հեռավար կրթությամբ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար կարող է օգտագործել ինչպես հեռավար ուսուցման համալիր էջում տեղակայված ուսումնամեթոդական նյութերը, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ մշակել նոր ուսումնամեթոդական նյութեր՝ առարկայի ծրագրին, ուսումնական պլանին եւ պետական չափորոշչին համապատասխան:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 23*

### Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ. ՀՀ կառավարության՝ 2023 թ. փետրվարի 9-ի N 181-Ն որոշում

**Հարց 388.** Ո՞ր մարմինն է հայտարարում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

*- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կամ մարզպետարանի կամ Երեւանի քաղաքապետարանի (այսուհետ՝ լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանումը՝ ըստ ենթակայության:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 2*

**Հարց 389.** Տվյալ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, ի՞նչ ժամկետում է համապատասխան մարմինը հայտարարում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

*- Առավելագույնը 45 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 40 աշխատանքային օր առաջ:*

*Նույն տեղում, կետ 2*

**Հարց 390.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ չի հայտարարվում եւ չի անցկացվում՝

*- Հուլիսի 9-ից մինչեւ օգոստոսի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 3*

**Հարց 391.** Ո՞ր դեպքում չի կարող նշանակվել նույն հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող:

*- Տվյալ հաստատության տնօրենը, որի լիազորությունների դադարեցման արդյունքում առաջացել է տնօրենի պաշտոնի թափուր տեղ:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 5*

**Հարց 392.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող կարող է նշանակվել՝

*- Տվյալ հաստատության խորհրդի անդամ չհանդիսացող տնօրենի տեղակալը:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 6, ենթակետ 1*

**Հարց 393.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող կարող է նշանակվել՝

*- Տվյալ հաստատության խորհրդի անդամ չհանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի կրթության ոլորտի բարձրագույն կրթություն եւ վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի եւ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 6, ենթակետ 2*

**Հարց 394.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնակցության հայտերի բացակայության դեպքում լիազոր մարմինը ե՞րբ է հայտարարում է նոր մրցույթ:

*- հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 10*

**Հարց 395.** Քանի՞ օրվա ընթացքում է իրականացվում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի փորձաքննությունը:

*- 10 աշխատանքային օրվա:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 29*

**Հարց 396.** Ո՞վ է անցկացնում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթը:

*- Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձեւավորված մասնագիտական հանձնաժողովը:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգ», կետ 19*

### Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրաման

**Հարց 397.** Որքա՞ն բնակչություն ունեցող բնակավայրերում գործող հաստատությունների դեպքում է ձեւավորվում միացյալ խորհուրդ:

*- Մինչեւ 3000:*

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգ», կետ 4*

**Հարց 398.** Քանի՞ անդամից կարող է կազմված լինել միացյալ խորհուրդը:

*- Առավելագույնը 19 անդամից:*

*Նույն տեղում, կետ 5, ենթակետ 2*

**Հարց 399.** Մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է՝

*- Խորհրդի 4 անդամ, որից երկուսին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը գրավոր ձեւով մարզպետին:*

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգ», կետ 9*

**Հարց 400.** Ի՞նչ ժամկետով է ձեւավորվում հաստատության խորհուրդը:

*- 3 տարի ժամկետով:*

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգ», կետ 3*

*շարունակությունը էջ 10*

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 9*

## *«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ»* պետական հիմնարկները վերակազմակերպելու, *«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»* պետական ոչ առեւտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին՝ 2002 թ. հուլիսի 25 N 1392-Ն որոշում

**Հարց 401.** Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին:

*- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, Երեւանի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին):*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 27*

**Հարց 402.** Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին:

*- Գործադիր մարմինը՝ տնօրենը եւ վարչատնտեսական մասի համակարգողը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 27*

**Հարց 403.** Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին:

*- Հիմնադիրը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 27*

**Հարց 404.** Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝

*- Դպրոցի գործունեության առարկայի եւ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 29, ենթակետ 3*

**Հարց 405.** Լիազորված մարմնի լիազորություններից է՝

*- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է իր լիազորության տակ գտնվող հաստատության տնօրենին եւ համակարգողին եւ նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 1*

**Հարց 406.** Լիազորված մարմնի լիազորություններից է՝

*- Դպրոցի կանոնադրության հաստատումը եւ դրանում փոփոխությունների կատարումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 2*

**Հարց 407.** Լիազորված մարմնի լիազորություններից է՝

*- Դպրոցին ամրացված՝ պետական սեփականության օգտագործման եւ պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 4*

**Հարց 408** Լիազորված մարմնի լիազորություններից է՝

*- Գույքի օտարման կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար համաձայնություն տալը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 5*

**Հարց 409.** Դպրոցի խորհուրդը՝

*- Աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը եւ տալիս եզրակացություն:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 1*

**Հարց 410.** Դպրոցի խորհուրդը՝

*- Քննարկում է ներքին եւ արտաքին գնահատման արդյունքները:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 5*

**Հարց 411.** Դպրոցի խորհուրդը՝

*- Լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին եւ խնդիրներին համապատասխան:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 6*

**Հարց 412.** Դպրոցի տնօրենը՝

*- Խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 1*

**Հարց 413.** Դպրոցի տնօրենը՝

*- Դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է դասաբաշխում, որի հիման վրա ձեւավորվում է տարիֆիկացիան եւ հաստատվում նրա կողմից:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 2*

**Հարց 414.** Դպրոցի տնօրենը՝

*- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կառավարության որոշմամբ հաստատված մանկավարժական աշխատողների անվանացանկի հիման վրա ձեւավորում եւ հաստատում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատողների անվանացանկը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 3*

**Հարց 415.** Դպրոցի տնօրենը՝

*- Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու եւ լիազոր մարմնին ներկայացնելու համար:*

*Նույն տեղում, կետ 48, ենթակետ 4*

**Հարց 416.** Դպրոցի տնօրենը՝

*- Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը եւ տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժական աշխատողների հաշվետվությունները:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 7*

**Հարց 417.** Դպրոցի տնօրենը՝

*- Նախարարության հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում եւ խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների եւ սովորողների վարքագծի կանոնները:*

*Նույն տեղում, կետ 48, ենթակետ 10*

**Հարց 418.** Դպրոցի տնօրենը՝

*- Համաձայն պաշտոնների անվանացանկի եւ պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական աշխատողների, օպերատորի եւ գործավարի (օգնականի), իր տեղակալի, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (առարկայական մեթոդական միավորումների) ղեկավարների, դասղեկների ընտրությունը, կնքում եւ լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 11*

**Հարց 419.** Դպրոցի տնօրենը՝

*- Ղեկավարում է մանկավարժական խորհրդի եւ համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 12*

**Հարց 420.** Դպրոցի տնօրենը՝

*- Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը (կամ ապահովում է ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմումը) եւ ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունները:*

*Նույն տեղում, կետ 48, ենթակետ 13*

**Հարց 421.** Դպրոցի տնօրենը՝

*- Աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական եւ կամավոր ատեստավորումներին, ինչպես նաեւ տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 15*

**Հարց 422.** Դպրոցի տնօրենը՝

*- Խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 16*

**Հարց 423.** Դպրոցի տնօրենը՝

*- Ապահովում է արտադասարանական խմբակների եւ ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը:*

*Նույն տեղում, կետ 48, ենթակետ 18*

**Հարց 424.** Դպրոցի տնօրենը՝

*- Սահմանված կարգով ձեւավորում է դպրոցի սովորողների համակազմը, օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր է ձեռնարկում նրանց սոցիալական եւ հոգեբանական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն եւ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանալու իրավունքի իրացման ապահովման համար, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է տարածքը սպասարկող խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 23*

**Հարց 425.** Դպրոցի տնօրենը՝

*- Ապահովում է դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը եւ պահպանումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 22*

**Հարց 426.** Դպրոցի տնօրենը՝

*- Առաջարկություն է ներկայացնում համակարգողին՝ մանկավարժական աշխատողներին դրամական խրախուսում տրամադրելու համար:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 27*

**Հարց 427.** Դպրոցի տնօրենը՝

*- Համակարգողի կազմած նախահաշվի նախագծի վերաբերյալ ներկայացնում է դիտարկումներ:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 29*

**Հարց 428.** Դպրոցի համակարգողը՝

*- Լիազոր մարմին է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը, բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման մասին հայտը եւ հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը՝ դրանում ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, արտաքին եւ ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 1*

***շարունակությունը էջ 11***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 10*

**Հարց 429.** Դպրոցի համակարգողը`

*- Հաստատում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձեւավորված տարիֆիկացիան:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 2:*

**Հարց 430.** Դպրոցի համակարգողը`

*- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձեւավորում եւ հաստատում է վարչատնտեսական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների անվանացանկը:*

*Նույն տեղում, կետ 52, ենթակետ 3*

**Հարց 431.** Դպրոցի համակարգող`

*- Գնահատում է տնօրենի տրամադրած` ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերը, կազմում է նախահաշիվը եւ ներկայացնում է լիազոր մարմին:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 4*

**Հարց 432.** Դպրոցի համակարգողը`

*- Ապահովում է գնումների գործընթացի կազմակերպման եւ իրականացման աշխատանքները:*

*Նույն տեղում, կետ 52, ենթակետ 5*

**Հարց 433.** Դպրոցի համակարգողը`

*- Համաձայն պաշտոնների անվանացանկի եւ պաշտոնի նկարագրի` անցկացնում է վարչատնտեսական աշխատակիցների թափուր տեղի համար մրցույթը, կնքում եւ լուծում է աշխատանքային պայմանագրերը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 6*

**Հարց 434.** Դպրոցի համակարգողը`

*- Ապահովում է արտադասարանական խմբակների եւ ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները:*

*Նույն տեղում, կետ 52, ենթակետ 7*

**Հարց 435.** Դպրոցի համակարգողը`

*- Ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 9*

**Հարց 436** Դպրոցի համակարգողը`

*- Ապահովում է հաշվապահական հաշվառման իրականացումը եւ օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 10*

**Հարց 437.** Դպրոցի համակարգողը`

*- Ապահովում է դպրոցում գործածության ենթակա վարչատնտեսական փաստաթղթերի շրջանառությունը, վարումը եւ պահպանումը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 11*

**Հարց 438.** Դպրոցի համակարգողը`

*- Օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ այլ կազմակերպություններում, բացում է հաշվարկային եւ գանձապետական հաշիվներ, տալիս է լիազորագրեր:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 12*

**Հարց 439.** Դպրոցի համակարգողը`

*- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 13*

**Հարց 440.** Դպրոցի համակարգողը`

*- Օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնող մարմինների արձանագրած` օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների, օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի, խորհրդի որոշումների եւ կնքված պայմանագրերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում` անվտանգության տեխնիկայի ապահովման, վարչատնտեսական աշխատողների իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, ինչպես նաեւ սովորողների եւ աշխատակիցների կյանքի եւ առողջության պահպանման եւ ուսումնական հաստատության` օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53*

**Հարց 441.** Մանկավարժական խորհուրդը ձեւավորվում է`

*- տնօրենի հրամանով:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

**Հարց 442.** Մանկավարժական խորհուրդը իր կազմից, փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի այն անդամներին, ովքեր`

*- Քվեարկության արդյունքում երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչներ են:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 70*

**Հարց 443.** Ե՞րբ է գումարվում մանկավարժական խորհրդի առաջին նիստը:

*- Օգոստոսին:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

**Հարց 444.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն` հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը` սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի եւ առողջության պահպանումը:*

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 1

**Հարց 445.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը եւ սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 3*

**Հարց 446.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի եւ ուսումնական կաբինետների ձեւավորման, ինչպես նաեւ մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 4*

**Հարց 447.** Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է`

*- մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 74*

**Հարց 448.** Ի՞նչ ժամկետում է կազմվում մանկավարժական խորհրդի նիստի արձանագրությունը:

*- երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 74*

**Հարց 449** Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են`

*- ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ (սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ) եւ այլ անձինք:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունե ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 77*

**Հարց 450.** Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են`

*- քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81*

**Հարց 451.** Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է`

*- դպրոցի տնօրենը եւ արդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 83*

**Հարց 452** Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են`

*- Նույն առարկայի կամ հարակից առարկաների երեք եւ ավելի ուսուցիչների առկայության դեպքում:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84*

**Հարց 453.** Մեթոդական միավորումը սահմանված կարգով մշակում եւ տնօրենի հաստատմանն է ներկայացնում`

*- քննական եւ ստուգողական առաջադրանքներ` առնվազն երեք տարբերակով, ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված անհատական առարկայական պլաններ, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցեր:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 87, ենթակետ 12*

**Հարց 454.** Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված` նախագահից եւ երկուսից չորս անդամից) ընտրվում են`

*- դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից` մեկ ուսումնական տարվա համար:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն` ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 90*

**Հարց 455.** Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ`

*- առնվազն չորս անգամ:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 96*

**Հարց 456.** Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է`

*- տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 9*

**Հարց 457.** Առարկայական մեթոդական միավորումը մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում`

*- ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 87, ենթակետ 9*

**Հարց 458.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը եւ սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:.*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 3*

**Հարց 459.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը եւ հաշվետվությունը, դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական եւ այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 6*

**Հարց 460.** Մանկավարժական խորհուրդը քննարկում է`

*- Ուսումնական հաստատությանը փորձաքննության տրամադրված կամ իր կողմից մշակված հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների եւ ծրագրերի, դպրոցի ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաեւ նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները եւ այլ նյութեր:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունե ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 5*

***շարունակությունը էջ 12***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 11*

**Հարց 461.** Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է՝

*- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների համապատասխանությունը:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 24*

**Հարց 462.** Հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է՝

*- Պետական ամփոփիչ ատեստավորում:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 24*

**Հարց 463.** Ուսումնական խմբերը՝ դասարանները, կազմավորվում են՝

*- Ըստ սովորողների տարիքի եւ նրանց կողմից ուսումնական ծրագրի յուրացման արդյունքի:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 23*

**Հարց 464.** Կառավարման նոր համակարգի անցած հանրակրթական ուսումնական հաստատությունում համակարգողի բացակայության դեպքում ո՞վ է իրականացնում համակարգողին վերապահված գործառույթները:

*- Տվյալ հաստատության տնօրենը:*

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 60*

**Հարց 465.** Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո ի՞նչ ժամանակահատվածում է համակարգողն օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոցի նախահաշվի նախագիծը ներկայացնում տնօրենին:

*- մեկ ամսվա ընթացքում:*

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 55*

**Հարց 466.** Ո՞վ է ապահովում հանրակրթական ուսումնական հաստատությունում արտադասարանական խմբակների եւ ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը:

*- Դպրոցի տնօրենը:*

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 48, ենթակետ 18*

**Հարց 467.** Ո՞վ է ապահովում հանրակրթական ուսումնական հաստատությունում արտադասարանական խմբակների եւ ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները:

*- Դպրոցի համակարգողը:*

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 52, ենթակետ 7*

**Հարց 468.** Ո՞ւմ հրամանով է ձեւավորվում Մանկավարժական խորհուրդը:

*- տնօրենի հրամանով:*

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

## Հանրակրթության պետական չափորոշչի ձեւավորման եւ հաստատման կարգը եւ հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն եւ հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության՝ 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշում

**Հարց 469.** Ի՞նչ է կարողունակությունը՝

*- Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության եւ դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների եւ դիրքորոշումների հիման վրա, ըստ իրավիճակի, արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձեւերն են:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 6*

**Հարց 470.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Լեզվական գրագիտություն եւ կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 1*

**Հարց 471.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:՝

*- Սովորել սովորելու կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 2*

**Հարց 472.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Ինքնաճանաչողական եւ սոցիալական կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 3*

**Հարց 473.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Ժողովրդավարական եւ քաղաքացիական կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 4*

**Հարց 474.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Թվային եւ մեդիա կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 5*

**Հարց 475.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Մշակութային կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 6*

**Հարց 476.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Մաթեմատիկական եւ գիտատեխնիկական կարողունակություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 7*

**Հարց 477.** Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն:

*- Տնտեսական կարողունակություն:.*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 8*

**Հարց 478.** Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ:

*- Գիտելիք:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 1*

**Հարց 479.** Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ:

*- Հմտություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 2*

**Հարց 480.** Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ:

*- Դիրքորոշում:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 3*

**Հարց 481.** Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ:

*- Արժեքային բաղադրիչ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 4*

**Հարց 482.** Ի՞նչ է ուսումնական բնագավառը:

*- Ուսումնական բնագավառը կրթության բովանդակության որոշակի տիրույթ է, որն առանձնանում է ուսումնառության օբյեկտով եւ բնույթով, գործունեության եւ ճանաչողության յուրահատուկ մեթոդներով:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 14*

**Հարց 483.** Ո՞ր մարմինն է մշակում առարկայական ծրագիրը:

*- Առարկայի ծրագիրը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված նորմատիվ փաստաթուղթ է:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16*

**Հարց 484.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Ուսուցման նպատակը՝ ըստ կրթական աստիճանների:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 1*

**Հարց 485.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Առարկայի (դասընթացի) ընդհանուր բնութագիրը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 2*

**Հարց 486.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 3*

**Հարց 487.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 4*

**Հարց 488.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական եւ նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 5*

**Հարց 489.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Ժամաքանակի բաշխումը ըստ դասարանների:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 6*

**Հարց 490.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Թեմաները եւ դրանց բովանդակությունը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 7*

**Հարց 491.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Թեմաների ուսումնառության ակնկալվող արդյունքները:.*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 8*

**Հարց 492.** Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը:

*- Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների գնահատումը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 9*

**Հարց 493.** Ի՞նչ է մշակվում առարկայական ծրագրերի հիման վրա:

*- Առարկայի ծրագրերի հիման վրա սահմանված կարգով մշակվում են թեմատիկ եւ անհատական ուսուցման պլաններ, ստեղծվում են դասագրքեր, ուսուցչի ձեռնարկներ եւ այլ ուսումնական նյութեր:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 17*

**Հարց 494.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Հայոց լեզու եւ գրականություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 1*

**Հարց 495.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Հայրենագիտություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 2*

**Հարց 496.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Օտար լեզուներ:.*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 3*

**Հարց 497.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- ԲՏՃՄ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 4*

**Հարց 498.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Արվեստ եւ արհեստ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 5*

**Հարց 499.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Հասարակություն, հասարակական գիտություններ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 6*

**Հարց 500.** Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ:

*- Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 7*

**Հարց 501.** Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝

*- ուսումնական բնագավառները:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 19*

**Հարց 502.** Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝

*- Ըստ կրթական աստիճանների՝ ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակները:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20*

**Հարց 503.** Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝

*- սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն եւ առավելագույն ծավալը՝ ըստ կրթական երեք աստիճանների:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20*

**Հարց 504.** Ուսումնական պլանների եւ ուսումնական պլաններում փոփոխությունների հաստատումը, ըստ անհրաժեշտության, կատարվում է՝

*- Ոչ ուշ, քան նոր ուսումնական տարվա սկզբից առնվազն երկու ամիս առաջ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 32*

***շարունակությունը էջ 13***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 12*

**Հարց 505.** Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝

*- Հայոց լեզվի եւ գրականության ուսուցումը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

**Հարց 506.** Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝

*- Հայոց պատմության ուսուցումը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

**Հարց 507.** Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝

*- Մաթեմատիկայի ուսուցումը:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

**Հարց 508.** Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝

*- Առնվազն մեկ օտար լեզվի ուսուցանումը՝ առանձին կամ ինտեգրված առարկաների ձեւով:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

**Հարց 509.** Տրվածներից ո՞րը ուսումնական բնագավառ չէ:

*- ՆԶՊ:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20,*

**Հարց 510.** Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝

*- հայոց լեզվի եւ գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի եւ առնվազն մեկ օտար լեզվի ուսուցանումը՝՝ առանձին կամ ինտեգրված առարկաների ձեւով:*

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

## Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության՝ 2023 թ. մարտի 2-ի N-259-Ն որոշում

**Հարց 511.** Քանի՞ աշխատանքային օրվա ընթացքում է լիազոր մարմինը կազմակերպում եւ իրականացնում համակարգողի պաշտոնի թափուր տեղի նշանակումը:

*- 30 աշխատանքային օրվա ընթացքում:*

*02.03.2023թ. N-259-Ն որոշում, կետ 4*

**Հարց 512.** Քանի՞ աշխատանքային օրվա ընթացքում է լիազորված մարմինը հաստատության համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու մասին հայտարարությունը հրապարակում www.azdarar.am կայքում:

*- 3 աշխատանքային օրվա ընթացքում:*

*02.03.2023թ. N259-Ն որոշում, կետ 5*

**Հարց 513.** Հաստատության համակարգողին ներկայացվող պարտադիր պայմաններից է արդյոք հավաստագիր ունենալը:

*- Ո՛չ:*

*02.03.2023թ. N259-Ն որոշում, կետ 8*

## Լիազորված մարմնի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրավաբանական անձին պատվիրակելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության՝ 2023 թ. հունվարի 12-ի N 57-Ն որոշում

**Հարց 514.** Հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու համար իրավաբանական անձին առնվազն քանի հաստատության վարչատնտեսական գործառույթներ կարող են պատվիրակվել:

*- Առնվազն 3:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 2*

**Հարց 515.** Հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների քանի՝ հիմնական ուղղություններ են առանձնացվում:

*- 6 ուղություն:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4*

**Հարց 516.** Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից:

*- Հաշվապահություն:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 1*

**Հարց 517.** Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից՝

*- Սննդի կազմակերպում:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 3*

**Հարց 518.** Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից:

*- Անվտանգության տեխնիկայի ապահովում:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 5*

**Հարց 519.** Ո՞վ է իրականացնում վարչատնտեսական գործառույթների պատվիրակումն իրավաբանական անձին:

*- Լիազոր մարմինը:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 6*

**Հարց 520.** Ո՞ւմ է ներկայացնում աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրությունը պատվիրակված անձը:

*- Համակարգողին:*

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 12*

## Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձեւավորման եւ գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը սահմանելու մասին՝ 2022 թ. սեպտեմբերի 29-ի N 1509-Ն որոշում

**Հարց 521.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի որոշումները նախարարություն բողոքարկվելու դեպքում քանի՞ անդամից է ձեւավորվում նախարարի հրամանով ձեւավորվող բողոքարկման հանձնաժողովի կազմը:

*- Երեք:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 30*

**Հարց 522.** Քանի՞ օրվա ընթացքում է տարակարգի բողոքարկման հանձնաժողովն ուսումնասիրում ներկայացված փաստաթղթերը, կազմում հանրապետական հանձնաժողովի որոշումներն անփոփոխ թողնելու կամ վերանայելու վերաբերյալ համապատասխան եզրակացություն եւ ներկայացնում նախարարին:

*- Երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 31*

**Հարց 523.** Տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմքերից է՝

*- Երբ ուսուցիչը զրկվում է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 2*

**Հարց 524.** Տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմքերից է՝

*- Երբ հերթական ատեստավորման արդյունքում ուսուցիչը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 3*

**Հարց 525.** Կարո՞ղ է տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմք լինել:

*- Հերթական ատեստավորման արդյունքում ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելը:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 3*

**Հարց 526.** Ե՞րբ է պահպանվում ուսուցչի՝ տարակարգը:

*- Տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում ուսուցչի՝ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 35, ենթակետ 1*

**Հարց 527.** Ուսուցչի՝ տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում աշխատանքից ազատվելուց հետո, որեւէ հաստատությունում նորից ուսուցչական աշխատանքի անցնելու դեպքում պահպանվո՞ւմ է արդյոք տարակարգը:

*- Տարակարգը պահպանվում է հնգամյա ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 35, ենթակետ 2*

**Հարց 528.** Երրորդ աստիճանի տարակարգի համար ուսուցչի աշխատավարձի քանի՞ տոկոսի չափով է տրվում հավելավճարը:

*- 30 %-ի չափով:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 36, ենթակետ 3*

**Հարց 529.** Ի՞նչ պարբերականությամբ է տրվում տարակարգ ստացած ուսուցչի հասանելիք հավելավճարը:

*- Յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 37*

**Հարց 530.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովը քանի՞ անդամներից է ձեւավորվում:

*- 11 անդամներից:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 4*

**Հարց 531.** Տարակարգին դիմող ուսուցիչը ի՞նչ պետք է ներկայացնի՝ հավաստելու դասընթացի եւ դասի պլանավորման հմտությունը:

*- Դիմող ուսուցչի կողմից տվյալ ուսումնական տարում դասավանդվող առարկայի (առարկաների) տարեկան թեմատիկ պլանը (պլանները), ինչպես նաեւ տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած բոլոր դասերի պլանները՝ իր դասավանդած բոլոր դասարանների համար:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 22, ենթակետ 2*

**Հարց 532.** Տարակարգին դիմող ուսուցիչը ի՞նչ պետք է ներկայացնի՝ հավաստելու Կրթության ոլորտի օրենսդրության եւ պրակտիկայի իմացությունը:

*- Գրավոր կարծիք կամ առաջարկություններ հանրակրթության ոլորտը կարգավորող առնվազն մեկ իրավական ակտի վերաբերյալ:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 22, ենթակետ 12*

**Հարց 533.** Սահմանված պահանջների միջին հաշվարկով քանի՞ տոկոսին համապատասխանելու դեպքում է շնորհվում առաջին աստիճանի տարակար:

*- առնվազն 70 %-ն ապահովելու դեպքում:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 29, ենթակետ 1*

**Հարց 534.** Սահմանված պահանջների միջին հաշվարկով քանի՞ տոկոսին համապատասխանելու դեպքում է շնորհվում չորրորդ աստիճանի տարակար:

*- Առնվազն 80 %-ն ապահովելու դեպքում:*

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 29, ենթակետ 4*

*շարունակությունը էջ 14*



# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 13*

## Հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական եւ անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի եւ խմբակների երաշխավորման կարգը սահմանելու մասին 2023թ. փետրվարի 24-ի N 09-Ն հրաման

**Հարց 535** Ո՞վ կարող է վարել խմբակը հանրակրթական ուսումնական հաստատությունում:

*- Խմբակը կարող է վարել տվյալ հաստատության ուսուցիչը կամ այն անձը, որն ունի բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ (ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:*

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 8*

**Հարց 536.** Կրթական որեւէ աստիճանում յուրաքանչյուր խմբակին հատկացվող ժամաքանակը չի կարող գերազանցել`

*- Շաբաթական 2 ակադեմիական ժամը:*

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 18*

**Հարց 537.** Ինչի՞ն պետք է համապատասխանի յուրաքանչյուր կրթական աստիճանում գործող խմբակի ծրագիրը:

*- պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին:*

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 20*

## Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում դասագրքերը եւ ուսումնական այլ նյութերը գործածության երաշխավորելու կարգը հաստատելու մասին 2023թ. փետրվարի 24-ի N 08-Ն հրաման

**Հարց 538** Ո՞ւմ միջոցով նաեւ Նախարարությունը կարո՞ղ է Ուսումնական նյութի փորձաքննությունը պատվիրել եւ իրականացնել:

*- Նաեւ այլ կազմակերպությունների միջոցով:*

*24.02.2023թ. N 08-Ն հրաման, կետ 8*

## Հանրակրթական առարկաների դասագրքերի եւ ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման եւ հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձեւավորման կարգը սահմանելու մասին 2022 թ. հունիսի 9-ի N 20-Ն հրաման

**Հարց 539.** Ո՞վքեր կարող են մասնակցել դասագրքերի ստեղծման մրցույթին:

*- Ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 17*

**Հարց 540.** Ի՞նչ եղանակով է իրականացվում դասագրքերի ստեղծումն ու հրատարակումը:

*- Մրցութային եղանակով:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 15*

**Հարց 541.** Ո՞րն է հանդիսանում դասագրքին ներկայացվող պահանջ:

*- Դասագիրքը եւ ուսումնաօժանդակ գրականությունը պետք է հնարավորություն ընձեռեն բազմակողմանիորեն ծանոթանալու ներկայացվող նյութին կամ թեմային եւ նպաստեն սովորողի մոտ դրա վերաբերյալ սեփական դիրքորոշման ու կարծիքի ձեւավորմանը:*

*Նույն տեղում, կետ 2, ենթակետ 4*

**Հարց 542.** Ո՞րն է հանդիսանում դասագրքին ներկայացվող պահանջ:

*- Դասագրքում եւ ուսումնաօժանդակ գրականության մեջ պետք է օգտագործվեն տեղեկատվության փոխանցման տարբեր եղանակներ` տեքստային, պատկերային, գրաֆիկական, թվային եւ այլ` փոխլրացման եւ համադրման սկզբունքով` խուսափելով կրկնություններից:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 2, ենթակետ 6*

**Հարց 543.** Ինչի՞ց է կախված տվյալ դասագրքի օգտագործման նվազագույն ժամկետը:

*- Կախված տվյալ առարկայի շաբաթական դասաժամերի քանակից:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 2, ենթակետ 8*

**Հարց 544.** Կարո՞ղ է արդյոք ծնողը հրաժարվել թղթային դասագրքից:

*- Այո՛, օգտագործելով էլեկտրոնային կամ հիբրիդ դասագիրք:*

*Նույն տեղում, կետ 11*

**Հարց 545.** Ո՞րն է դասագրքի փորձաքննության համապատասխանության փուլը:

*- Այս փուլում գնահատվում է ներկայացված դասագրքում նյութի գիտական համապատասխանությունը:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 21, ենթակետ 1*

**Հարց 546.** Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում:

*- Բժիշկ-հիգիենիստ:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 6*

**Հարց 547.** Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում:

*- Նկարիչ-ձեւավորող:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 5*

**Հարց 548.** Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում:

*- Մանկավարժ-հոգեբան:*

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 3*

## Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին 2013 թ. ապրիլի 15-ի N 396-Ն հրաման

**Հարց 549.** Հանրակրթական ուսումնական հաստատությունում ո՞ր աշխատատեղն է մարվում թափուր:

*- Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով եւ տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված` ուսուցչի չզբաղեցրած պաշտոնը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 2*

**Հարց 550.** Հանրակրթական ուսումնական հաստատությունում թափուր մնացած պաշտոնի առկայության դեպքում մրցույթ չի հայտարարվում, եթե`

*- Տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի` պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում):*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 10, 1-ին ենթակետ*

**Հարց 551.** Քանի՞ փուլով է անցկացվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը:

*- Երկու փուլով` թեստավորման եւ հարցազրույցի:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 36*

**Հարց 552.** Ե՞րբ է նշանակվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման օր:

*- Փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 15*

**Հարց 553.** Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլի հարցաշար:

*- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 37*

**Հարց 554.** Քանի՞ անդամից է կազմված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութի հանձնաժողովը:

*- 5 անդամից:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 22*

**Հարց 555.** Ո՞վ է հաստատում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անվանական կազմը:

*- Հաստատության տնօրենը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 21*

**Հարց 556.** Ի պաշտոնե` ո՞վ է հանդիսանում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահը:

*- Հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը կամ պարտականությունները կատարողը):*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 23*

**Հարց 557.** Ե՞րբ է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նիստն համարվում իրավազոր:

*- Եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 25*

**Հարց 558.** Քանի՞ ձայնով են ընդունվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի որոշումները:

*- Առնվազն 3 կողմ ձայնով:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 35*

**Հարց 559.** Ո՞վ է բացատրում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը եւ պատասխանում մասնակիցների հարցերին, ինչպես նաեւ տեղեկացնում է թեստավորման փուլի անցկացման տեւողության մասին:

*- Հանձնաժողովի քարտուղարը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 45*

**Հարց 560.** Որքա՞ն է թեստավոման առաջադրանքի համար տրվող ժամանակը:

*- 90 րոպե:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 50*

**Հարց 561.** Ո՞ւմ կողմից են կազմվում թեստավորման փուլի առաջադրանքները:

*- Յուրաքանչյուր հաստատություն նախարարության կողմից մշակված եւ պաշտոնական կայքէջում եւ «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակված հարցաշարից պատահական ընտրությամբ կազմում է 50 հարցից բաղկացած թեստ:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 40*

***շարունակությունը էջ 15***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 14*

**Հարց 562.** Հարցազրույցի փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ քանի՞ հարցատոմս է ընտրում:

*- Մեկ հարցատոմս` բաղկացած հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարի 5 հարցերից:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 64*

**Հարց 563** Ե՞րբ է մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած:

*- Եթե Հարցազրույցի փուլում մասնակցի ստացած միավորների տոկոսային արտահայտությունը առնվազն յոթանասուն տոկոս է:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 75*

**Հարց 564.** Մասնակիցը մրցույթի հաջորդ` հարցազրույցի փուլ է անցնում`

*- թեստավորման առաջադրանքների առնվազն 90 % ճիշտ պատասխանելու դեպքում:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 51*

**Հարց 565.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի արդյունքները ե՞րբ կարող են բողոքարկվել մրցութային հանձնաժողովին:

*- Թեստավորման արդյունքների հրապարակումից հետո` մեկ ժամվա ընթացքում:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 56*

**Հարց 566.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի ո՞ր մասնակիցն է մրցույթում հաղթող ճանաչվում:

*- Առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 76*

**Հարց 567.** Եթե հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթում մեկից ավելի մասնակիցներ հավաքել են առավելագույն հավասար միավորներ, ապա ընտրվում է այն մասնակիցը`

*- որին կողմ է քվեարկել դպրոցի տնօրենը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» օրինակելի կարգ, կետ 76*

**Հարց 568.** Նշվածներից ո՞ր մարմինը իրավասու չէ մշակելու հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլի հարցաշար:

*- Մարզպետարանը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 37*

**Հարց 569.** Ո՞վ է հաստատում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անհատական կազմը:

*- հաստատության տնօրենը:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 21*

**Հարց 570.** Ո՞վ կարող է հանդիսանալ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահ:

*- Հաստատության տնօրենի պաշտոնակատար:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 23*

**Հարց 571.** Կարո՞ղ է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նիստը համարվել իրավազոր:

*- եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի 4 անդամ:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 25*

## Դրսեկության ձեվով (էքստեռն) փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու կարգը հաստատելու մասին 2010 թ. հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրաման

**Հարց 572.** Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատության սովորողը քանի՞ անգամ կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան:

*- Միայն մեկ անգամ:*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 5*

**Հարց 573.** Հանրակրթական ուսումնական հաստատության ո`ր դասարանների սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ չեն կազմակերպվում:

*- Առաջին եւ երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական դասարանների սովորողների համար:*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 6*

**Հարց 574.** Ինչպե՞ս են նշանակվում դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների կիսամյակային եւ տարեկան գնահատականները:

*- Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների քննական գնահատականները համարվում են կիսամյակային եւ տարեկան գնահատականներ:*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 16*

**Հարց 575.** Ո՞ր դասարանների ծրագրային նյութերից են կազմակերպվում էքստեռն փոխադրական քննությունները (գիտելիքների ստուգումը):

*- Տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի եւ հաջորդ դասարանի 1-ին կիսամյակի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութի շրջանակներում:*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 9, ենթակետ 3*

**Հարց 576.** Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ եւ քանի՞ միավոր գնահատվելու դեպքում էքստեռն քննություններ հանձնած սովորողը կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան:

*- Փոխադրական բոլոր քննություններից 10 բալային համակարգում 9-10 միավոր գնահատվելու դեպքում դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու մասին:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 13, 2-րդ ենթակետ*

**Հարց 577.** Ո՞ր տարիքի անձինք կարող են մասնակցել էքստեռն ավարտական քննություններին` հիմնական կրթության վկայական ստանալու համար:

*- Մինչեւ տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող) անձը:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 18*

**Հարց 578.** Ո՞վ կարող է էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ:

*- Էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստացած եւ 18 տարին լրացած դրսեկը:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 19, ենթակետ 1,*

**Հարց 579.** Ո՞վ կարող է էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ:

*- Հիմնական կրթության վկայական ունեցող անձը, եթե վկայական ստանալու տարվանից անցել է 4 եւ ավելի տարի ( տարիների հաշվարկը կատարվում է ուսումնական պարապմունքների ավարտման օրվանից):*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 19, ենթակետ 2,*

**Հարց 580.** Հիմնական կրթության վկայական եւ միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական քննությունները քանի՞ քննաշրջաններով են կազմակերպվում:

*- 3 քննաշրջաններով:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 23*

**Հարց 581.** Որքա՞ն ժամանակ են ուժի մեջ դրսեկի ստացած գնահատականները:

*- Մինչեւ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալը:*

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 36*

**Հարց 582.** Հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթում նշվածներից ո՞ր մարմինն է լիազորված կատարել *«Էքստեռն»* նշումը:

*- Նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 40*

**Հարց 583.** Էքստեռն ավարտական քննությունները գերազանց հանձնած անձը չի կարող պարգեւատրվել:

*- Գովասանագրով կամ մեդալով:*

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 41*

## Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգը հաստատելու մասին 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1496-Ն հրաման

**Հարց 584.** Ինչի՞ն է նպատակաուղղված վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը:

*- Հանրակրթական հիմնական ծրագրերից դուրս` կամավորության սկզբունքով, սովորողների, քաղաքացիների հետաքրքրությունների եւ նախասիրություն ների բավարարմանը, հոգեւոր, մարդասիրական, գեղագիտական, ֆիզիկական, ստեծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական եւ հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 2*

**Հարց 585.** Վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը, ո՞ր դասարանների սովորողների մասնակցությամբ եւ ո՞ր առարկաներից կարող է իրականացվել:

*- 1-9-րդ դասարանցիների մասնակցությամբ, միայն ուսումնական պլանով տվյալ դասարանի առարկայացանկում չընդգրկված առարկաներից:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 3*

**Հարց 586.** Բացի լրացուցիչ կրթությունից` ի՞նչ այլ ծառայություններ կարող է իրականացնել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը:

*- Մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումներ, սովորողների առողջության պահպանման միջոցառումներ, սովորողների սննդի կազմակերպում, սովորողների երկարօրյա ուսուցման եւ կամ գիշերակացի եւ ամառային հանգստի կազմակերպում, ուսումնաարտադրական գործառնության ծավալում եւ արտադրանքի իրացում:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 4*

***շարունակությունը` էջ 16***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 15*

**Հարց 587.** Ո՞ր մարմինն է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության մատուցման պայմանագրի օրինակելի ձեւը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 6*

**Հարց 588.** Լրացուցիչ կրթական ծառայության իրականացումից հետո պատվիրատուին կատարողի կողմից ինչպիսի՞ փաստաթուղթ կարող է տրվել:

*- Կատարողի կողմից հաստատված եւ կնքված մասնագիտական որակավորում չպարունակող փաստաթուղթ:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 7*

**Հարց 589.** Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը պարտավոր է`

*- Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի միջոցով նախարարությանը ներկայացնել տեղեկություններ:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 8*

**Հարց 590.** Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը ո՞ւմ միջոցով կարող է իրականացնել լրացուցիչ կրթական ծառայություններ:

*- Հաստատության, այնպես էլ հրավիրված մասնագետների եւ (կամ) մանկավարժների միջոցով:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 9*

**Հարց 591.** Ի՞նչն է պարտադիր լրացուցիչ կրթական ծառայություններ իրականացնող մասնագետի համար:

*- Համապատասխան մասնագիտական որակավորումը:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 10*

**Հարց 592.** Ո՞ւմ ներկայությունն է պարտադիր սպորտային խմբակների դեպքում:

*- Բժշկի:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 11*

**Հարց 593.** Ո՞վ է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության ուսումնական պլանը, ծրագիրը եւ դասացուցակը:

*- Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 12*

**Հարց 594.** Ո՞ր մարմինն է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության վարձավճարի եւ կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը:

*- Հաստատության կառավարման խորհրդի որոշմամբ` տնօրենը` հրամանով:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 13*

**Հարց 595.** Ո՞վ եւ ի՞նչ կարգով է կատարում լրացուցիչ կրթական ծառայությունների համար վճարումները:

*- Պատվիրատուն` կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով:*

*ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական եւ /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաեւ այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ*

## Սովորողների տնային ուսուցման կարգը սահմանելու մասին` ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի` 2022 թ. օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման

**Հարց 596.** Տնային ուսուցման կազմակերպման մասնակիցներն են`

*- սովորողները, ծնողները, այդ սովորողների ուսոցման կազմակերպման մեջ ներգրավված ուսուցիչները, մանկավարժական այլ աշխատողներ, ինչպես նաեւ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետները` ըստ անհրաժեշտության:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 7-րդ մաս*

**Հարց 597.** Ինչի՞ համաձայն է սովորողների համար կազմակերպվում տնային ուսոցում:

*- կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից սահմանված տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանի, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի պարագայում նաեւ Հաստատության կազմած ԱՈՒՊ-ի համաձայն:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 8-րդ մաս*

**Հարց 598.** Սովորողի համար տնային ուսուցում կազմակերպելու համար ծնողը ի՞նչ փաստաթուղթ է ներկայացնում հաստատություն:

*- Սովորողի առողջության վերաբերյալ տեղեկանք:*

*Նույն տեղում, 2-րդ գլուխ, 9-րդ մաս, 2-րդ կետ*

**Հարց 599.** Ե՞րբ է սկսում իրականացվել տնային ուսուցումը:

*- Տնային ուսուցումը կազմակերպվում է պայմանագրի կնքման պահից:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 12-րդ մաս,*

**Հարց 600.** Սովորողի տնային ուսուցումը կարո՞ղ է դադարեցվել վաղաժամկետ:

*- Այո, ծնողի նախաձեռնությամբ:*

*Նույն տեղում, 2-րդ գլուխ, 14-րդ մաս,*

**Հարց 601.** Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում`

*- ապահովում է սովորողի ուսումնառության իրականացումը տանը` ներառյալ էլեկտրոնային ուսուցման կիրառումը եւ հեռավար ուսուցման տեխնոլոգիաների տրամադրումը` ըստ անհրաժեշտության:*

*Նույն տեղում, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 3-րդ կետ*

**Հարց 602.** Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում`

*- իրականացնում է սովորողի ուսումնական առաջադիմության ընթացիկ գնահատում, ամփոփիչ ստուգում, ատեստավորում եւ սովորողի փոխադրում հաջորդ դասարան:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 9-րդ կետ*

**Հարց 603.** Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում`

*- խորհրդատվություն է տրամադրում սովորողի ծնողներին` սովորողի կրթության գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 10-րդ կետ*

**Հարց 604.** Տնային ուսուցումը կազմակերպվում է`

*- պետական բյուջեով Հաստատությանը հատկացված ֆինանսական միջոցների հաշվին:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 3-րդ գլուխ, 20-րդ մաս*

**Հարց 605.** Ինչպե՞ս է իրականացվում տնային ուսուցում իրականացնող ուսուցիչների վարձատրությունը:

*- Վարձատրությունն իրականացվում է ժամավճարով` հաշվի առնելով Հաստատությունում սահմանված դրույքաչափը:*

*Նույն տեղում, 3-րդ գլուխ, 22-րդ մաս*

**Հարց 606.** Ո՞վ է պատասխանատու հաստատության կողմից տնային ուսուցման կազմակերպման եւ գործընթացի վերահսկողության համար:

*- պատասխանատու է Հաստատության տնօրենը:*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի` 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 3-րդ գլուխ, 19-րդ մաս*

## Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը սահմանելու, դրանց լրացման (գործածման) կարգը հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման

**Հարց 607.** Ո՞վ է իրականացնում էլեկտրոնային դասամատյանի լրացումը (գործածումը):

*- Առարկաները դասավանդող ուսուցիչները:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 5*

**Հարց 608.** Քանի՞ օրվա ընթացքում է էլեկտրոնային դասամատյանում ուսուցիչը լրացնում դասացուցակով նախատեսված դասը:

*- Երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 6*

**Հարց 609.** Ովքե՞ր են իրականացնում էլեկտրոնային դասամատյանի վարման վերահսկողությունը:

*- Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Կրթության տեսչական մարմինը, լիազոր մարմինը, դպրոցի տնօրենը եւ տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը` դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում` իրենց վերապահված գործառնությունների շրջանակում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 7*

**Հարց 610.** Քանի՞ տարի է ավարտական դասարանների դասամատյանների պահպանման ժամկետը:

*- 50 տարի:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 8*

**Հարց 611.** Քանի՞ տարի է ոչ ավարտական դասարանների դասամատյանների պահպանման ժամկետը:

*- 5 տարի:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 8*

**Հարց 612.** Ի՞նչ է պարունակում աշխատողի անձնական էլեկտրոնային գործը:

*- Աշխատողի աշխատանքային գործունեության մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի եւ նյութերի ամբողջությունն է, որը ձեւավորվում եւ պահպանվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի` 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս 2 կետ 1*

***շարունակությունը էջ 17***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 16*

**Հարց 613.** Ո՞վ է վարում հաստատության աշխատակցի անձնական գործը:

*- Անձնական գործը վարում է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը, կամ տնօրենի հրամանով նշանակված աշխատակիցը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 614.** Ի՞նչ է պարունակում սովորողի անձնական էլեկտրոնային գործը:

*- Սովորողի անձնական էլեկտրոնային գործը սովորողի մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի եւ նյութերի ամբողջությունն է, որը ձեւավորվում եւ պահպանվում է համակարգում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս 3, կետ 1*

**Հարց 615.** Ինչի՞ հիման վրա է ձեւավորվում տարիֆիկացիոն մատյանը:

*- Տարիֆիկացիոն մատյանը ձեւավորվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դպրոցի դասարանների կոմպլեկտավորման, ուսումնական պլանի եւ դասաբաշխման հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս 8*

## Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեւաչափը եւ զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման

**Հարց 616.** Քանի՞ տարվա համար է կազմվում հաստատության զարգացման ծրագիրը:

*- Հինգ:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 617.** Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:

*- Հաստատության գործունեությունը:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 618.** Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:

*- Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ եւ թույլ կողմերը:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 619.** Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:

*- Նպատակների եւ խնդիրների սահմանումը:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 620.** Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:

*- Սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների եւ միջոցառումների ժամանակացույցը:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

**Հարց 621.** Թվարկվածներից ո՞րը հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ չէ:

*- Արդյունքային ցուցանիշները:*

*ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս 2, կետ 2*

## Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ. հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրաման

**Հարց 622.** Ի՞նչ նպատակով է կազմակերպվում երկարօրյա խմբերի ուսուցումը:

*- Երկարօրյա խմբերը ստեղծվում են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս1, կետ 2*

**Հարց 623.** Ինչպե՞ս են համալրվում երկարօրյա խմբերը:

*- Երկարօրյա խմբերը համալրվում են ըստ կրթական աստիճանի (տարրական եւ/կամ միջին դպրոց) կամ զուգահեռ դասարանների:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 5*

**Հարց 624.** Ո՞վ է հաստատում երկարօրյա խմբերի կազմը, դրանց հետ աշխատող մանկավարժական աշխատողների անվանական կազմը:

*- Հաստատության տնօրենը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 7*

**Հարց 625.** Ո՞վ է հաստատում երկարօրյա խմբերի աշխատանքի տարեկան պլանը եւ ուսումնադաստիարակչական աշխատանքների կարգացուցակը:

*- Հաստատության տնօրենը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 7*

**Հարց 626.** Ո՞ւմ կողմից են հաստատվում երկարօրյա խմբերի ծրագրերը:

*- Կրթության պետական լիազոր մարմնի կողմից:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 8*

**Հարց 627.** Երկարօրյա խմբերի աշխատանքի կարգացուցակում փոփոխություններ կարող են կատարվել:

*- Հաստատության տնօրենի հրամանով:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 10*

**Հարց 628.** Ո՞վ է կազմում երկարօրյա խմբի (խմբերի) աշխատանքի կարգացուցակը եւ աշխատանքի տարեկան պլանը:

*- Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 11*

**Հարց 629.** Որքա՞ն է երկարօրյա խմբերում ընդգրկված սովորողների թիվը, եթե խմբում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ:

*- 25 սովորող:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 13*

**Հարց 630.** Ինչպե՞ս կարող է բացվել սահմանված խտությունից պակաս խտությամբ երկարօրյա խումբ:

*- Հաստատության ֆինանսական միջոցների, իսկ մասնակի կամ լրիվ վճարովի խմբերում ծնողների վճարումների հաշվին:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 14*

**Հարց 631.** Ինչպե՞ս է կազմակերպվում երկարօրյա խմբերում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների ծառայությունների մատուցումը:

*- Պետական միջոցների հաշվին:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 15*

**Հարց 632.** Հաստատության երկարօրյա խմբերը ձեւավորում են մինչեւ ընթացիկ ուսումնական տարվա՝

*- սեպտեմբերի 10-ը եւ համալրվում են տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 17*

**Հարց 633.** 5-9-րդ դասարաններում երկարօրյա խմբում դասապատրաստմանը օրական քանի՞ ժամ է հատկացվում:

- Մինչեւ 3 ակադեմիական ժամ:

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս 2, կետ 19*

## Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշներ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման

**Հարց 634.** Ի՞նչն է համարվում ուսուցչի մասնագիտական չափանիշը:

*- Ուսուցչի մասնագիտական զարգացման եւ գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիրն է:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 1*

**Հարց 635.** Ի՞նչ բաղադրիչներից է բաղկացած ուսուցչի մասնագիտական չափանիշը:

*- Զարգացման ոլորտներ, մասնագիտական գործունեության ձեւեր, կարողունակության մակարդակներ, մանկավարժի բնութագրեր:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 2*

**Հարց 636.** Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից:

*- Ավագ ուսուցիչ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ 1*

**Հարց 637.** Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից:

*- Հմուտ ուսուցիչ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ 2*

**Հարց 638.** Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից:

*- Վերապատրաստող ուսուցիչ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ 3*

**Հարց 639.** Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից:

*- Հետազոտող ուսուցիչ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ 4*

## Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրաման

**Հարց 640.** Ըստ նպատակի՝ սովորողների գնահատման քանի՞ տեսակ է կիրառվում:

*- Երեք տեսակ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7*

**Հարց 641.** Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ:

*- Հայտորոշիչ գնահատում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7*

**Հարց 642.** Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ:

*- Ձեւավորող գնահատում:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7*

**Հարց 643.** Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ:

*- Ամփոփիչ գնահատում (միավորային եւ բնութագրող):*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7*

***շարունակությունը էջ 18***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 17*

**Հարց 644.** Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

*- 1-4-րդ դասարանների կիսամյակների եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ. փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 6, կետ 47*

**Հարց 645.** Ո՞րն է ձեւավորող գնահատման խնդիրը:

*- Սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 3, կետ 13*

**Հարց 646.** Արդյո՞ք նշանակվում է միավոր ձեւավորող գնահատման ժամանակ:

*- Ո՛չ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 3, կետ 23*

**Հարց 647.** Ե՞րբ է սովորողը գնահատվում 10 միավոր:

*- Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երեւույթների ներքին եւ արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական եւ ստեղծագործական հմտություններ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 41*

**Հարց 648.** Ե՞րբ է սովորողը գնահատվում 6 միավոր:

*- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 41*

**Հարց 649.** Ի՞նչ է արձանագրում ուսուցիչը բնութագրող գնահատման ժամանակ:

*- Սովորողի ինքնուրույնությունը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 45*

## Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ. դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման

**Հարց 650.** Ի՞նչ ընթացակարգով է իրականացվում տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Պարզ ընթացակարգով՝ դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների հիման վրա՝ փաստաթղթային եղանակով:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 1, կետ 4*

**Հարց 651.** Քանի՞ խմբի են բաժանվում տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջները:

*- Երեք խմբի:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6*

**Հարց 652.** Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:

*- Կառավարչական գիտելիքներ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6*

**Հարց 653.** Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:

*- Մասնագիտական գործունեության ձեւեր:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ.-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6*

**Հարց 654.** Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:

*- Կառավարչական հմտություններ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6*

**Հարց 655.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում Ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Ուսումնական հաստատության զարգացման ծրագիր:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 656.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլաններ, տնօրենի վերջին նշանակումից հետո՝ պաշտոնավարման բոլոր տարիների համար:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 657.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված ներդպրոցական վերահսկողության արդյունքների վերլուծություն՝ տնօրենի վերջին նշանակումից հետո՝ պաշտոնավարման բոլոր տարիների համար:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 658.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություններ եւ կառավարման խորհրդի կողմից տրված եզրակացություններ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 659.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Դպրոցում իրականացված ստուգումների, արտաքին գնահատումների, մշտադիտարկումների արդյունքների մասին տեղեկություններ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 660.** Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:

*- Դպրոցում իրականացված լրացուցիչ ու այլընտրանքային ծրագրերի արդյունքների մասին տեղեկություններ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10*

**Հարց 661.** Ո՞ր դեպքում է տնօրենի աշխատանքը գնահատվում արդյունավետ:

*- «Արդյունավետ» է գնահատվում տնօրենի աշխատանքը, եթե Հաստատության զարգացման ծրագրի գնահատման սանդղակով սահմանված՝ զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է «Արդյունավետ»:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 13*

**Հարց 662.** Ո՞ր դեպքում է տնօրենի աշխատանքը գնահատվում զարգացնող:

*- «Զարգացնող» է գնահատվում տնօրենի աշխատանքը, եթե Հաստատության զարգացման ծրագրի գնահատման սանդղակով սահմանված՝ զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է «Զարգացնող»:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 14*

## Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի եւ դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձեւավորման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության՝ 2022 թ. ապրիլի 28-ի N 596-Ն որոշում

**Հարց 663.** Ոչ պետական ուսումնական հաստատության ուսուցիչը, ով մասնակցել է կամավոր ատեստավորման գործընթացին, ինչպե՞ս է վարձատրվում:

*- Կարող է վարձատրվել հիմնադրի ֆինանսական միջոցների հաշվին:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 6*

**Հարց 664.** Ո՞վ կարող է դիմել ուսուցչի կամավոր ատեստավորման գործընթացին:

*- Չաշխատող անձը:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 5.1*

**Հարց 665.** Թվարկվածներից ո՞ր ձեւով չի կարող անցկացվել կամավոր ատեստավորման գործընթացը:

*- Բանավոր:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 7*

**Հարց 666.** Ի՞նչ լեզվով են կազմվում ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասվարների համար թեստերը:

*- Ռուսերենով:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 12*

**Հարց 667.** Դպրոցից դպրոց տեղափոխման արդյունքում՝

*- հավելավճարը պահպանվում է:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 75*

**Հարց 668.** Ատեստավորման արդյունքում նախորդ արդյունքի համեմատ ավելի բարձր արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցիչը հավելավճար է ստանում՝

*- վերջին արդյունքի հիման վրա, որի համար սահմանվում է հավելավճար ստանալու հնգամյա նոր ժամկետ:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77*

**Հարց 669.** Ատեստավորման արդյունքում նախորդ արդյունքին հավասար արդյունք ցուցաբերելու դեպքում՝

*- ուսուցչի հավելավճարի չափը պահպանվում է, որի համար սահմանվում է հնգամյա նոր ժամկետ:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77*

**Հարց 670.** Ատեստավորման արդյունքում նախորդ արդյունքի համեմատ ավելի ցածր արդյունք ցուցաբերելու դեպքում՝

*- հավելավճարը պահպանվում է արդեն սահմանված ժամկետով:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77*

**Հարց 671.** Հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական այլ հաստատությունում համատեղությամբ աշխատող ուսուցիչն՝

*- ատեստավորվում է հիմնական աշխատավայրում դասավանդող առարկայից:*

*ՀՀ կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 80*

***շարունակությունը էջ 19***



# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 18*

## Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար

**Հարց 672** Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:

- Այն խմբերը, որի անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:

*գլ. 1, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, 2004 թ.*

**Հարց 673.** Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը:

*- Դասի նպատակով:*

*գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, 2004 թ.*

**Հարց 674.** Ի՞նչ է ուսուցման մեթոդը:

*- Մանկավարժի եւ սովորողի ուսուցման նպատակներին ուղղված եւ որոշակիորեն կարգավորված գործունեություն:*

*գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, 2004 թ.*

**Հարց 675** Նշվածներից ո՞րն է կրթության բովանդակային բաղադրիչներից:

*- Կարողությունները եւ հմտությունները*

*Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, 2004 թ.*

## Մանկավարժություն. դասագիրք բուհերի համար

**Հարց 676.** Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

*- Էքսկուրսիա:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 677.** Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

*- Ցուցադրում:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 678.** Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

*- Դիտում:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 679.** Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

*- Իլյուստրացիա:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 680.** Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:

*- Զրույց:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 681.** Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:

*- Դասախոսություն:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 682.** Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:

*- Աշխատանք դասագրքով:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 683.** Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:

*- Վարժություններ:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 684.** Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:

*- Գործնական աշխատանքներ:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 685.** Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:

*- Լաբորատոր աշխատանքներ:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 686.** Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:

*- Ճանաչողական խաղեր:*

*գլ. V, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 687.** Ի՞նչ ենք հասկանում՝ կարողություն ասելով:

*- Կարողությունները գիտելիքներն են գործողության մեջ:*

*գլ. I, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 688.** Ի՞նչ ենք հասկանում՝ *«հմտություն»* ասելով:

*- Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձեւավորված գործունեության առանձին դրսեւորումների ավտոմատացված տարրերն են:*

*գլ. I, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 689.** Նշվածներից ո՞րն է դաստիարակության մեթոդ:

*- Դրական օրինակի մեթոդը:*

*գլ. IV, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

**Հարց 690.** Նշվածներից ո՞րն է արտահայտում նպատակ դասի գործունեության հասկացության բովանդակությունը:

*- Նպատակը ցանկալի եւ նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:*

*գլ. I, Նույն տեղում*

**Հարց 691.** Ի՞նչ հիմնական հարցերի է կոչված պատասխանելու դիդակտիկան:

*- Ի՞նչ սովորեցնել եւ ինչպե՞ս սովորեցնել հարցերին:*

*Բաժին 2, Ղուկասյան Գ. Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, երկու գրքով, գիրք I, գիրք II, Երեւան, «Զանգակ-97», 2005թ.*

## Դպրոցի ղեկավարում եւ կառավարում. ձեռնարկ դպրոցի տնօրենների համար

**Հարց 692.** Ի՞նչ ենք հասկանում՝ ակտիվ ուսումնառություն ասելով:

*- Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են ե՛ւ մասնակից, ե՛ւ կատարող:*

*Բաժին 1, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ., Դպրոցի ղեկավարում եւ կառավարում, ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՐԵՔՍ, Երեւան, 2003թ,*

**Հարց 693.** Ի՞նչ ենք հասկանում՝ կազմակերպության առաքելություն ասելով:

*- Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:*

*Բաժին 2, Նույն տեղում*

## Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն

**Հարց 694.** Ո՞րն է սովորողների գնահատման գլխավոր նպատակը:

*- Կրթության որակի բարելավումը:*

*Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա., Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարություն, 2008թ*

## Ներառական կրթության ռազմավարություն

**Հարց 695.** Ուսուցչի օգնականը՝

*- աշխատում է ուսուցչի վերահսկողությամբ՝ աշակերտներին ուշադրության կենտրոնում պահելու եւ ուսուցմանն օժանդակելու համար:*

*Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երեւան, Ասողիկ, 2020*

**Հարց 696.** Համատեղ դասավանդումը՝

*- մանկավարժների կամ այլ մասնագետների գործընկերությունն է՝ դասարանի ներսում տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար:*

*Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երեւան, Ասողիկ, 2020*

**Հարց 697.** Բազմամասնագիտական թիմը՝

*- բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից եւ երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:*

*Նույն տեղում:*

## Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ եւ ծրագիր. 1-12-րդ դասարաններ

**Հարց 698.** Ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության իրականացման համար ինչպիսի՞ նվազագույն պայմաններ են անհրաժեշտ:

*- Կահավորված մարզադահլիճ, մարզագույք եւ համալիր մարզահրապարակ:*

*Գրիգորյան Յու., Մինասյան Հ., Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ եւ ծրագիր. 1-12-րդ դասարաններ, ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն, Երեւան, 2007թ.*

## Բռնության եւ զոհի հոգեբանություն. ուսումնամեթոդական ձեռնարկ

**Հարց 699.** Դպրոցական բռնությունը՝

*- բռնությունը տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից ուժ է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ:*

*Մարինե Միքայելյան, Բռնության եւ զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երեւան, Ճարտարագետ, 2016*

**Հարց 700.** Դպրոցական բռնությունը՝

*- կարող է լինել հուզական եւ ֆիզիկական բնույթի:*

*Մարինե Միքայելյան, Բռնության եւ զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երեւան, Ճարտարագետ, 2016*

**Հարց 701.** Հուզական բռնության ձեւ է՝

